

ԵՍ ՇԱՏ ԷՒ ՆՄԱՆ ԱՅՆ ՀԵՔԻԱԹԻ ԿԱՏՎԻՆ,  
ՈՐ ԵՐԲ ՄԻՆՉԻ ԱՆԳԱՄ ՉՔԱՆՈՒՄ Է ԱՉՔԻՑ՝  
ՎԱՌ ԺՊԻՏԸ ՆՐԱ ԴԵՌ ՄՆՈՒՄ Է ԵՐԿԱ՛Ր...

ԵՍ ԳՅՈՒՏԱՐԱՐՆ ԷՒ ՔՈ ԱՅՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ,  
ՈՐ ՄԻ ԳՈՒՑԵ ՉԿԱՐ ԻՆՁՆԻՑ ԱՌԱՋ  
ԵՎ ՉԼԻՆԻ ԳՈՒՑԵ ԻՆՁՆԻՑ ՀԵՏՈ:

ՈՒ ՆԻՐՀԵՅԻ (ԳՈՒՑԵ և ՔՆԵՅԻ՞)  
ՔՈ ԱՅՂ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՍՏՎԵՐԻ ՏԱԿ՝  
ԲՈԼՈՐ ԿԱՍԿԱԾՆԵՐՍ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՃԱՍՓԱԾ  
ԵՎ ԾԱԾԿԸՎԱԾ ՏԱՔՈՒԿ ԱՅՆ ՉԳԻՏԵՄ ԻՆՉՈՎ,  
ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է... ՀԱՎԱ՛Տ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈ՞ՒՆ:

ԱՐԹՆԱՑԵԼ ԵՄ ԱՐԴԵՆ:  
Օ, ՉԷ՛, ԱՐԹՆԱՑԻ՛Ր:  
ԵՎ ԻՄ ԳՐՉԻ ԾԱՅՐԻՑ, ՕՐ-ՑԵՐԵԿՈՎ,  
ՄԻ ՊՈՒՏ ՄԹԻՆ ԳԻՇԵՐ ՀԵՆՑ ՆՈՐ ԿԱԹԵՑ  
ԱՅՍ ՄԻԱՄԻՏ-ԱՆՄԵՂ  
ՄԱՔՈՒՐ-ՃԵՐՄԱԿ ԹՂԹԻՆ,  
ՄԱՔՈՒՐ-ՃԵՐՄԱԿ՝  
ԻՆՉՊԵՍ ԻՆՔԸԴ ԵՐԵԿ...

ԵՍ ԳԻՏԵԻ ՀԱՍՏԱ՛Տ,  
ԵՍ ԳԻՏԵԻ ՎԱՂՈ՛ՒՑ:  
ԴԱ ԳԻՏԵԻ՝ ՆՈՒՅՆԻՄԿ ՔՈ ԾՆՆԴԻ՛Ց ԱՌԱՋ:

ԵՍ ՄՊԱՍՈՒՄ ԷՒ և ԳԻՏԵԻ՝  
ԿԳԱ՛Ս:

ԵՎ ԳԻՏԵԻ ՆԱԿ, ՈՐ ԻՆՉ ՀԱՄԱՐ  
ՔՈ ԳԱԼՍՏՅԱՆ ՕՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ  
ՍԱՐՍԱՓԵԼԻ, ԲԱՅՑ և ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՅՆՔԱՆ,  
ՈՐՔԱՆ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ  
ԱԿՆԿԱԼՎԱԾ ՕՐԸ ԱՀԵՂ ԴԱՍԱՍՏԱՆԻ:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆ ԵՄ ԵՍ ՄՇՏԱՅՑԵԼՈՒ ՄԻՐՈ,  
ԵՎ ՕՐԵՐԻ ՕՐԸ ՀԱՍԱ՛Վ.  
-ԵԿԱ՛Ր:

ԳՈՐԾԱԾ և ՉՔԱՎԱԾ ԻՄ ՄԵՂՔԵՐԻ ԾՈՎԻՑ  
ԵՍ ԴՈՒՐՍ ԵԿԱ ՄԱՔՈՒՐ՝ ՈՐՊԵՍ ՈՐՈՐ ՃԵՐՄԱԿ:

ԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ ՉԷՐ ԴՐԱԽՏ ԿԱՄ ԵԴԵՄՅԱՆ ԱՅԳԻ.  
ՔԱՂԱՔԱՄԵՐՉ ԱՆՏԱՌ և ԱՅԳԻՆԵՐ ԿԱՅԻՆ...

ՔԱՂԱՔԱՄԵՐՉ ԱՆՏԱՌ և ԱՅԳԻՆԵՐ ԿԱՅԻՆ,  
ՈՐ ԻՆՉ ՀԱՄԱՐ ԴԱՐՁԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ ՄԻՐՈ...

Թե տիկնու հսկ ԿԱՅԻՐ ԴՈՒ ԻՆՁԱՆԻՑ ԱՌԱՋ՝  
ԵՍ ՔԵՁ ՄԻԱԼԳԱՄԱՅՆ ՆՈՐԻ՛Ց ՍՏԵՂԾԵՑԻ,  
ՔԵՁ ՏՎԵՑԻ ՆՈ՛Ր ԿԵՐՊ՝

ԸՍՏ ԻՄ ՄԻՐՈ:

ՈՒ ԵՐԲ ՔԱՇՎԱԾ ՄԻ ԿՈՂՄ՝  
ՔԵՁ ՆԱՅԵՑԻ ՀԵՌՎԻՑ,  
ՍԱՌԱԾ ԻՄ ԱՉՔԵՐԸ ՄԻԱԼԳԱՄԻՑ ԴԱՐՁԱՆ  
ԱՆՇԵՂ ՀԻԱՅՄՈՒՆՔԻ ԿՐԱԿԱՐԱՆ ԵՐԿՈՒ:

Ո՞Վ ՉԻ ՍՔԱՆՉԱՆՈՒՄ ԻՐ ԻՍԿ ՍՏԵՂԾԱԾՈՎ...

ԻՐՈՔ. ԱՅՂ ԵՍ ԷԻ, ՈՐ ՔԵՁ ՍՏԵՂԾԵՑԻ,  
ԱՅՂ ԵՍ ԷԻ, ՈՐ ՔԵՁ ԿՅԱՆՔ ՏՎԵՑԻ ԿՅԱՆՔՈՒՄ:  
ԵՎ ՎԱՂ ԹԵ ՈՒՇ ՊԻՏԻ ԴՈՒ ԱՊՐԵԻՐ  
ՔՈ ԱՌԱՆՁԻ՛Ն ԿՅԱՆՔՈՎ:

ԵՎ ԱՊՐԵՑԻ՛Ր:

ԻՍԿ ԵՍ ՄԻԱՅՆ ՄԱՐԴ ԵՄ:  
ԵՍ ԱՍՏՎԱԾ ՉԵՄ ԲՆԱՎ,  
ՈՐ ԲԱՐԿԱՆԱՄ ՀԱՆԿԱՐԾ ԵՆ ՈՐՈՇԵՄ.  
-«Ե՛Ս ՏՎԵՑԻ ՔԵՁ ԿՅԱՆՔ,  
ԵՍ ԷԼ ԵՏ ԵՄ ԱՌՆՈՒՄ»...

ԱՂՋԻԿՆԵՐԸ ԿՅԱՆՔՈՒՄ ՈՒՌԵՆՈՒ ԵՆ ՆՄԱՆ.  
ՇԱ՛Տ ԱՐԱԳ ԵՆ ԱՃՈՒՄ:

ԵՎ ԱՃԵՑԻ՛Ր:

ԻՆՉ ԵՍ ԷԻ ՁԳՈՒՄ՝ ՀԱՍՅՈՐԵՑԻՐ ՁԳԱԼ,  
ԻՆՉ ԵՍ ԷԻ ՄԻՐՈՒՄ՝ ԴՈՒ ՄԻՐԵՑԻՐ:

ԻՆՉ ՀԵՏ - ԿՄՈՌԱՆԱ՞Մ - ԴՈՒ ԵՐՁԱՆԻԿ ԷՒՐ  
ԱՎԵԼԻ, ՔԱՆ ԳՈՒՑԵ  
\_\_\_\_\_ ԴԱՂՁԸ՝ ԱՌՎԻ ԱՓԻՆ,  
\_\_\_\_\_ ՑՈՒԼԻ ՎՁԻՆ՝ ՁԱՆԳԸ,  
\_\_\_\_\_ ՋՐՀՈՐԻ ՄԵՁ՝ ԱՍՏՂԸ:

-ՔԵՁ Ի՞ՆՉ ԵՂԱՎ ՀԱՆԿԱՐԾ,  
\_\_\_\_\_ ԻՄ ԲԱԽՏԱՎՈ՛Ր...

...ՔՈ ԵՐԳԵՑԻԿ ՔԱՅԼԻՑ  
\_\_\_\_\_ ԻՄ ԱԿԱՆՁԻ ՀԱՄԱՐ  
ԱՆԴՈՒԼ ԴՂՐԴԱՅՈՂ ԱՅՍ ՔԱՂԱՔԻ  
ԴԺՈՒՍՅԻՆ ԱՂՄՈՒԿՆ ՈՒ ԺԽՈՐՆ ԷՐ ԼՌՈՒՄ:

-ՆՎԱԳԴ ԻՆՉՈ՞Ւ ԼՌԵՑ,  
ԻՄ ԵՐԳԵՀՈ՛Ն...

...ՈՉ ՄԻ ԱՐԴՈՒԿ ԿՅԱՆՔՈՒՄ ՉԻ՛ ՀԱՐԹԵՑՆՈՒՄ ԿՆՃԻՌ:  
ՔՈ ՁԵՌՔՆ - Ի՛ՆՔԴ ԳԻՏԵՍ - ՇԱ՛Տ ԴՅՈՒՐԻՆ ԷՐ ՀԱՐԹՈՒՄ.  
\_\_\_\_\_ - ՁԵՌՔԸԴ ԻՆՉՈ՞Ւ ՉՎԵՑ՝  
ԱՄՌԱՆ ԿԵՍԻ՛Ն...

...ՍԵՐՆ ԻՄ ԳԵՂԵՑԻԿ ԷՐ ՔՆԱԾ ՄԱՆԿԱՆ ՆՄԱՆ,  
ՈՐ ԺՊՏՈՒՄ Է ՆԱԿ՝ ԵՐԱԶԻ ՄԵՁ:

- ԻՆՉՈ՞Ւ ԱՐԹՆԱՅԸՐԻՐ՝  
ԼԱՅԱՅՆԵԼՈ՛Վ...

...ԲԱՅՑ ՆՄԱՆ ՉԵ՞Մ ՀԻՄԱ ԵՍ ԱՅՆ ՄԱՆԿԱՆՆ ԱՐԴԵՆ,  
ՈՐ ՀԱՐՅՆՈՒՄ Է ՆԱԿ ԻՐ ԻՄԱՅԱ՛Ծ ԲԱՆԻՑ:

- ՉԷ՞ ՈՐ ԻՆՔՍ ԳԻՏԵՍ.  
ԱՂԶԻԿՆԵՐԸ ԿՅԱՆՔՈՒՄ  
ՈՒՌԵՆՈՒ ԵՆ ՆՄԱՆ -  
ԱՃՈՒՄ ԵՆ ՇՈ՛ՒՏ ԱՅՆՊԵՍ:

ԵՎ ԱՃԵՑԻ՛Ր:

ՀԻՄԱ  
Ի՞ՆՉ ԿԱ ԶԱՐՄԱՆԱԼԻ,  
ՈՐ ՔՈ ԸՍՏՎԵՐԻ ՏԱԿ,  
ՔՈ ՇՎԱՔԻ ՆԵՐՔՈ

ՆԱԿ ՈՒՐԻՇՆԵՐՆ ԵՆ ՀԱՆԳԸՍՏԱՆՈՒՄ...

Ա՛Ք, ԵՍ ՍԻՐՈ ՀԱՐՅՈՒՄ ԵՐԵՔԱ ԵՍ ՏԱՐԵՑ...

ՈՒ ԾՔԱՄՈՐՃՆ Է ԼՈԿ ԻՄ ՍՏԸՆՏՈՒՆ ԲԱՐԻ  
ԵՎ ԻՄ ԱՂԱՔԻՆԸ, ՈՐ ՉՈՐՍ ԿՈՂՄԻՑ ՀԻՄԱ  
ՇՐՁԱՊԱՏՈՒՄ Է ԻՆՉ ԻՐ ՀՈԳԱՏԱՐ ԾՔՈՎ:

ԲԱՅՑ ՉՈՐՍ ՊԱՏԵՐԻ ՄԵՁ ԲԱՆՏՎԱԾ ԾՈՒՔԸ ՀԼՈՒ,  
ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԵՆ ԻՄՊԱՌ ՀԱՏԱԾ,  
ԱՊԸՍԱՄԲՈՒՄ ԻՐ ԴԵՍ,  
ԻՄ ԱՉՔԵՐՆ Է ՃԱՆԿՈՒՄ:

ԵՍ ԱՄԵ՛Ն ԻՆՉ ԳՈՒՑԵ ԿՅԱՆՔՈՒՄ ԼԻՆԵՍ,  
ԲԱՅՑ ԲՈՆԱԿԱ՛Լ -  
\_\_\_\_\_ ԵՐԲԵ՛Ք,  
ԻՆՉՊԵՍ ԷԼ ՆԱ ԿՈՉՎԻ՛  
«ՀԱ՛ՅՐ», «ՂԵԿԱՎԱ՛Ր», «ԱՐՔԱ՛», -  
\_\_\_\_\_ ՄԻԿՆՈ՛ՒՅՆՆ Է:

ՈՒ ԵՍ ԲԱՅ ԵՍ ԱՆՈՒՄ ԼՈՒՍԱՄՈՒՑԻՄ ՓԵՂԿԸ՛  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԱԾ ԾՔԻՆ ՈՒՂԵԿՑԵԼՈՎ  
ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՅՈՂ ԻՄ ՀԱՅԱՑՔՈՎ ՏԽՈՒՐ...

ՆՈ՛ՒՅՆ ՀԱՅԱՑՔՈՎ ՀԻՄԱ ՈՒՂԵԿՑՈՒՄ ԵՍ Կ ՔԵՁ,

ԱՎԵԼԻ ԸԻՇՏ՝  
ԻՆՔԸՍ ՆԱՀԱՆՁՈՒՄ ԵՄ ԴԱՆԴԱՂ,  
ՄԻՇՏ ԴԵՊԻ ՔԵԶ՝ ԴԵՄՔՈՎ,  
ՄԵԶՔՈՎ՝ ԴԵՊԻ ԱՅՆՏԵՂ,  
ՈՐՏԵՂ ԴՈՒ ՉԵՍ ԼԻՆԻ,  
ԲԱՅՑ ԿԼԻՆԵՍ ՆԱԽ՝  
ԹԵԿՈՒԶԽ ԱՅՆ ԲԱՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ,  
ԹԵ ՔԵԶ ԱԶԱՏԵՑԻ՝  
\_\_\_\_\_ ՉՍՊԱՍԵԼՈՎ  
ՔՈ ԱՊԸՍՏԱՄԲ ԽՈՍՔԻՆ  
ԵՎ ԱԿԼԱՐԿԻՆ ԱՆԳԱՄ...

ԲԱՅՑ ՔՈ ՍԵՐԸ... ԳԻՏԵ՞Ս.  
-ՆԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՆՈՒՅՆՆ ԷՐ,  
ԻՆՉ «ԱՄԵՆ»-Ը՝ ԽՈՐՈՒՆԿ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ՄԵԿԻ...

ԹԵ ԶԳԵՑԱԾ ԷԻՐ՝  
ՄԱՐԻԱՄ ԷԻՐ ՄԻ ՆՈՐ:  
ԹԵ ՄԵՐԿԱՅԱԾ ԷԻՐ՝  
ՀԵԼԼԵՆ ԷԻՐ ՄԻ ՀԻՆ...

ԱՍԵՍ ՄԻ ԶԵՐՄԵՌԱՆԴ ԿՐԱԿԱՊԱՇՏ՝  
ԵՍ ՔՈ ԼՈՒՅՍԻՆ ԷԻ ՄԻՇՏ ԿԱՐԿԱՌՎՈՒՄ...

ՔՈ ԳՐԿԻ ՄԵԶ ԵՍ ԻՆՁ ԶԳՈՒՄ ԷԻ ՀՆԴԻԿ  
ՈՒ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԷԻ, ԹԵ ԻՆՉ Է «ՆԻՐՎԱՆԱ»...

ԵԹԵ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՍ ԼԻՆԵԻ,  
ԵՎ ԼԻՆԵԻ ՆՈՒՅՆԻՍԿ ՍՈՒԼԹԱՆ ՄԻ ՑՈՓ,  
ՀԱՐԵՄ ՉԷԻ ՊԱՀԻ՝  
\_\_\_\_\_ ՔՈ՛ ՊԱՏՃԱՌՈՎ...

...ՈՒ ՆՍՏԱԾ ԵՍ ՀԻՄԱ ԻՍ ՆԱԽԸՆՏԻՐ ԶԽՈՎ՝  
ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԲՈՒԴԴԱՆ՝  
\_\_\_\_\_ ԾԱԼԱՊԱՏԻԿ,  
ԲԱՅՑ ԽԱՉՎԱԾ ԵՍ ԶԳՈՒՄ՝  
\_\_\_\_\_ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՆՄԱՆ...

ԵՎ ԷԶԵՐՆ ԵՍ ՇՐՁՈՒՄ ՄԵՐ ԱՆԿԱՏԱՐ ՄԻՐՈ,  
ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆ՝ ԱՎԵՏԱՐԱՆՆ ԻՐ ՍՈՒՐԲ:

ՇԱ՛Տ ԲԱՆ ԱՆԳԻՐ ԳԻՏԵՄ - ՈՐՊԵՍ ԱՂՈԹՔ:  
ՇԱ՛Տ ԲԱՆ ՍՈՒՑ ԵՍ ԳՏՆՈՒՄ - ԵՂԵԼ ԵՍ ԿՈՒՅՐ:  
ՇԱ՛Տ ԲԱՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՍ ԵՍ ՆՈ՛Ր ՄԻԱՅՆ:  
ՇԱ՛Տ ԲԱՆԻ ՄԵԶ ՀԻՄԱ ՆՈ՛Ր ԻՄԱՍՏ ԵՍ ԴՆՈՒՄ:

ՄԻԱՅՆ ՀԱՎԱՏՍ Է, ՈՐ... ՉԻ՛ ԽՈՐԱՆՈՒՄ ԱՐԴԵՆ:

ԻՐԵՆՑ ԳԼՈՒԽՆԵՐՆ ԵՆ ԹԵՐԱՀԱՎԱՏ ՇԱՐԺՈՒՄ

ՄԵՐ ԱՍԾ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՄԵՐԿ ԾԱՌԵՐԸ ՆՈՒՅՆԻՄԿ:

ՈՒ ԵՍ ՏՈՒՆ ԵՄ ԴԱՌՆՈՒՄ՝

\_\_\_\_\_ ՀԱՍԿԱՆԱԼՈՎ,

ՈՐ ԵՄ՝

\_\_\_\_\_ ՀԱՎԱՏԱՔԱՂՑ

\_\_\_\_\_ և ՀԱՎԱՏԻ ԾԱՐԱՎ,

ԵՍ ՊԱՏՐԱՍ ԵՄ ՀԻՄԱ

\_\_\_\_\_ ԷԺԱՆ-ՀԱՐՄԱՐ ԳՆՈՎ

ՍԵՐ՝ ՎԱՃԱՌԵԼ ՆՈՒՅՆԻՄԿ,

ՄԻԱՅՆ ԹԵ ՏԱՆ ՀԱՎԱՏ.

ՄԻԱՅՆ ԹԵ ԿԱՍԿԱԾԸ ՉՓՈՍԱՆԱ ԻՄ ՄԵՋ,

ԻՆՉՊԵՍ ՏԱՔ ԵՐԿԱԹԸ՝ ՇԵՂՋԻ ՄԵՋ ՁՅԱՆ,

ԻՆՉՊԵՍ ՊՏՈՒՂԻ ՄԵՋ՝ ԻՐ ԻՄԿ ԾՆԱԾ ՃԻՃՈՒՆ.

ՄԻԱՅՆ ԹԵ ԱՅԼԵԸՍ ՉՄՏԱԾԵՄ,

ՈՐ ՇՈՒՐԹԵՐԸ ՆԱԿ ՀԱՄԲՈՒՅՐՈՎ ԵՆ ՍՏՈՒՄ

(ԽՈՍՔՈՎ ՍՏԵԼՆ ԱՍԵՍ ՔԻՉ ԷՐ, ՏԵՐ ԻՄ ԱՍՏՎԱԾ):

...ԻՆՉ ՊԵՍ ԳՈՒՆԱՏ ՊԱՏԻՑ՝

\_\_\_\_\_ ՔՈ ՓՈԽԱՐԵՆ,

\_\_\_\_\_ ՀԻՄԱ,

ՏԻՅԻԱՆ ԿՈՉՎԱԾ ԻՆՉ-ՈՐ ԱՐԴԱՐ ՄԵԿԻ ԿԱՍՔՈՎ,

ԻՄ ՄԵՂՔԵՐՆ Է ԼԱԼԻՍ ՄԱԳԴԱՂԻՆԵՆ՝

\_\_\_\_\_ ՔՈՒՅՐԸԴ:

ԵՎ ՀԱԿԱՌԱԿ ԳԼԽԻՍ ՈՒ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՍՔԻՍ,

ՄԻՐՏԸՍ՝

\_\_\_\_\_ ԱՆՈՒՂՂԵԼԻՆ,

\_\_\_\_\_ ԱՅԴ ՀԻՄԱՐԸ,

\_\_\_\_\_ ԴԱՐՁՅԱԼ

ՀԱՎԱՔԵԼ Է ՈՒՋՈՒՄ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՄԻՐՈ

ԵՎ ՀԱՎԱՏԻ ՉԵՂՅԱԼ ԿԱՍ ՍՈՒՏ ՎԿԱՅԱԿԱՆ՝

ՀԵՆՑ ՈՐ ԽՈՍՈՒՄ ԵՍ ԴՈՒ ՄԻՐԵԼՈՒՐ ՊԵՍ:

ՈՒ ԵՍ ԽԵՂԴԵԼՈՒՐ ՊԵՍ ՔՈ ՁԵՌՔԵՐՆ ԵՄ ՍԵՂՄՈՒՄ...

ԵՍ ԱՇԽԱՐՀ ԵՄ ԵԿԵԼ,

ՈՐ... ԱՍԵՆՔԻՆ ՆԵՐԵՄ,

ԲԱՅՑ Ո՛Չ ԵՐԲԵՔ ՆՐԱՆ, ՈՒՄ ՄԻՐՈՒՄ ԵՄ:

-ԻՆՉ ՆՄԱՆՆԵՐՆ ԱՆԳԱՍ... ՄԻՐԱԾԻՆ ՉԵՆ ՆԵՐՈՒՄ...

ԲԱՅՑ ԵՄ ԻՆՉ ԵՄ ԱՍՈՒՄ: ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ:

Է՛՛, ԱՍԵԼԸ ՀԵՇՏ Է:

ԹԵ ԱՍԵԼՈՎ ԼԻՆԵՐ՝

ԿԱՐԵԼԻ ԷՐ ՇՈՒՌ ՏԱԼ ԱՇԽԱՐՀՆ ԻՐՈՔ

ԵՎ ԻՄԿՈՒՅՆ ԷԼ ՏԵՂԸ ՄԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ՇԻՆԵԼ...

ՈՒ ԵՍ, ՈՐ ԻՆՔՆԱԿԱՍ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԵՍ ԻՆՁ  
ՄԻ՝ՏՆԱՅԻՆ ԿՈՉՎԱԾ՝ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ,  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՆԳԱՍ ՉԽՈՐՀԵԼՈՎ՝  
ԼՈԿ ԱԼԻՔՆ ԵՍ ՓՈԽՈՒՄ ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉԻ,  
ԻՆՉՊԵՍ ՈՒՐԻՇԼԵՐԸ ԻՐԵՆՑ ՍԵՐՆ ԵՆ ՓՈԽՈՒՄ:

ԴՐՍՈՒՄ՝ ՍԱՌՆԱՄԱՆԻՔ,  
ԵՎ ՁՄՌԱՆ ՄԵՁ, ՀԱՆԿԱՐԾ,  
ԻՄ ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ, ՈՐ ԲՐԱՄՍ Է ԿՈՉՎՈՒՄ,  
ՏԱՐԱԾՈՒՄ Է ԱՄԱ՛Ռ,  
ԼՈՒՅՍ ՈՒ ԱՐԵ՛,  
ՋԵՐՍՈՒԹՅՈՒՆ Է ՍՓՌՈՒՄ  
ՈՒ ՓՌՈՒՄ ՇՈԳ:

ԵՎ ՁՄԵՌՆ Է ՉՎՈՒՄ՝ ԹՌՉՈՒՆԻ ՊԵՍ ՃԵՐՄԱԿ:  
ՈՒ ՍՈՒՏ-ՄԱԳԱՂԱԹԵ ԱՅՆ ԹՂԹԵՐԸ ՇԵՐՏ-ՇԵՐՏ,  
ՈՐ ՊԻՆԴ ՍՈՍԸՆՉՎԵԼՈՎ ՆԵՂ ՃԵՂՔԵՐԻՆ ԲՈԼՈՐ՝  
ԱՍԵՍ ՀԱԳՅՈՐԵԼ ԵՆ ԻՄ ՏԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԻՆ  
ԱՔՍՈՐԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԶՈԼ-ԶՈԼ ՀԱԳՈՒՍՏ,-  
ՄԻ ՎԱՅՐԿՅԱՆՈՒՄ ՊՈԿՎՈՒՄ-ԸՆԿՆՈՒՄ ԵՆ ՎԱՐ,  
ԵՎ ԲԱՅ ՊԱՏՈՒՀԱՆԸՍ ՇՔԱԴՈՒՌ Է ԴԱՌՆՈՒՄ  
ԱՐՔԱՅԱԲԱՐ ՄՏՆՈՂ ԱՄՌԱՆ ՀԱՄԱՐ:

ԱՅՍ ԴԱՐԸ ՀԵՐՔՈՒՄՆ Է ԲՈԼՈ՛Ր ՀՐԱՇՔՆԵՐԻ  
(ՆԱԽ՝ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՈՉՎԱԾ ՄԻՐՈ),  
ՍԱԿԱՅՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՈՎ ԻՄ ԱՅՆ ԲԱՐԵԿԱՄԻ,  
ՈՐ ԲՐԱՄՍ Է ԿՈՉՎՈՒՄ ԵՄ ԱՅՑԵԼՈՒՄ ՀԱՃԱԽ,  
ՀՐԱՇՔԻՆ ԵՍ ՆՈՐԻՑ ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԽՈՐՈՒՆԿ:

ԵՎ ԱՄԱՌԸ՝  
\_\_\_\_\_ ԿԱԽԱԾ ԻՆՁ ԻՐ ՓԵՇԻՑ,  
ԻՍԿ ՔԵՁ ԹԵԸՍ ԳՅԱԾ՝  
\_\_\_\_\_ ՏԱՆՈՒՄ Է ՄԵՁ  
ՔԱՂԱՔԱՄԵՐԸ ԱՆՏԱՌ...

ԴՈՒ ՀԻՇՈ՞ՒՄ ԵՍ ԱՐԴՅՈՔ...

ԱՅՆՏԵՂ ԱՄԱՌԱՅԻՆ ՍՏՎԵՐՆ ԱՆԳԱՍ  
ԹԵԹԵ ՀԱԳՈՒՍՏԻ ՀԵՏ ՄՏՆՈՒՄ ՎԵՃԻ  
ՈՒ ՀԱՂԹՈՒՄ ԷՐ ՆՐԱՆ  
ԵՎ ՍՏԻՊՈՒՄ,  
ՈՐ ԿԱՆԱՉԻ ՎՐԱ ԿԱՐԿԱՏԱՆՎԵՆՔ՝  
ՍՏԵՂԾԵԼՈՎ ՄԻ ՀԻՆ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿ:

ԴՈՒ ՀԻՇՈ՞ՒՄ ԵՍ ԱՐԴՅՈՔ...

ՊՃՆՈՒՄ ԷՐ ԵՍ ՔԵՁ  
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՅՆԹՈՒՓ ՏԵՐԵՆԵՐՈՎ  
ՈՒ ՊՍԱԿՈՒՄ ԷՐ ՇԱՐՈՎ ԾԱՂԻԿՆԵՐԻ,  
ՈՐ ԴՈՒ ԱՍԵՆ ԻՆՉՈՎ ՃԱՎԱՅՈՒՀԻ ԴԱՌՆԱՍ,  
ՈՒ ՄԵՁ ՄԻ ՊԱՀ ԶԳԱՆՔ ՋՈՒՆԳԼԻՆԵՐՈՒՄ...

ԴՈՒ ՀԻՇՈ՞ՒՄ ԵՍ ԱՐԴՅՈՔ...

ԻՆՉՈ՞Ւ ՀԻՇԵԼ ՍԱԿԱՅՆ:

ՉԷ՛, ԱՎԵԼԻ ԼԱՎ Է, ՈՐ ՀԱՍԿԱՆԱՍ ՀԻՄԱ,  
ԹԵ ՔԵՁ ԿՈՐՅԸՐԵՑԻ ՋՈՒՆԳԼԻՆԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ,  
ԹԵ ԻՍԿԱՊԵՍ ՇՈՒՏՈՎ ԱՄԱՌ ԿԳԱ ԿՐԿԻՆ,  
ԲԱՅՑ ՄԵՆՔ ԷԼ ՉԵ՛ՆՔ ԼԻՆԻ ՄԵԿԸՍ ՄԵԿԻ ՀԱՄԱՐ...

ԿԳԱ ԿՐԿԻՆ ԱՄԱՌ,  
ԵՎ ՏԱՌԱՊԱԾ ՓՈՇԻՆ  
ԱԳԱՀ ԿՆԵՐԾԸԾԻ ԱՆՁՐԿԻ ՋՈՒՐՆ ԱՅՆՊԵՍ,  
ԱՄԵՍ ՎԱԼԵՐՅԱՆԻ ԿԱԹԻԼՆԵՐ Է ԸՄՊՈՒՄ,  
ՈՐ ՉԼԻՆԻ ԻՆՉ ՊԵՍ ՈՒՇԱԳՆԱՅ...

ԵՎ ԻՆՉ ՆՄԱՆ ԱՄՊԱԾ ԵՐԿԻՆՔՆ Է ԼՈՒՌ ՁՆՈՒՄ:  
ՈՒ ՄԱՅԹԵՐՆ ԵՆ ԻՐԵՆՑ ԴԵՄՔԻՆ ՇՊԱՐ ԴՆՈՒՄ:

ԴՈՒ ՉՈՒՆԵԻՐ ՈՉ ՆԵ՛ՐԿ,  
ՈՉ ՇՊԱ՛Ր ՈՒ ՄՆԳՈ՛ՒՅՐ:

ԴՈՒ Ի՛ՆՉ ԷԻՐ, ԳԻՏԵ՞Ս, ԹԵ Ի՛ՆՉ ԷԻՐ:  
ԴՈՒ ԿԻՆ ԷԻՐ, ԲԱՅՑ Խ ԱՂՋԻԿ ՈՒ ՔՈՒՅՐ,  
ՄՆԴԻԿԻ ՍՅԱ՛Ն ՆՄԱՆ ՈՒՂԻՂ ՈՒ ՋԻՆՋ ԷԻՐ,  
ԻՇԱԿԱԹՆՈ՛ՒԿ ՉԷԻՐ, ԱՅԼ ՍԻՆՉ ԷԻՐ,  
ԳԻՆԻ՛, ՈՐ ՉԻ ՏԱԼԻՍ ՄՐՈՒՐ-ՏԱԿԱՆՔ:  
ԵՎ Ի՛ՆՉ.

\_\_\_\_\_ ԴՈՒ ՔԵ՞Ձ ՉԷԻՐ, ԱՅԼ Ի՞ՆՉ ԷԻՐ  
ԱՅՍ ԱՄԵՆԻ ՀԱՄԱՐ ԼՈԿ ՊԱՐՏԱԿԱՆ...

ՁՅՈՒՆ Է ԳԱԼԻՍ ԿՐԿԻՆ:  
ԵՎ ՎԱՂՈ՞ՒՅ Է ԱՐԴՅՈՔ:  
ՀԱՆԴԻՊԱԿԱՅ ՇԵՆՔԻ ՔԻՎ-ՃԱԿԱՏԻ ԼԱՅՆՔԻՆ  
ՆԱ ՆՍՏԵԼ Է ՀԻՄԱ  
ՎԻՐԱԿԱՊԻ ՆՄԱՆ:

ԻՍԿ ԻՄ ԽԵՂՃ ՃԱԿԱՏԸ, Ի՛ՆՉ Է, ԿԱՐԻՔ ՉՈՒՆԻ՞:  
ՈՒ ԵՍ ԴՈՒՐՍ ԵՍ ԳՆՈՒՄ՝  
ԱՊԱՔԻՆՄԱՆ ՀՈՒՅՍՈՎ:

ԱՆՀՈԳՈՐԵՆ ՍՈՒԼՈՂ ԻՆՉ-ՈՐ ՋԱՀԵԼ ՔԱՄԻ,  
ԻՆՉՊԵՍ ԵՐԿՈՒՄ Է՝ ԴԵՌ ՉՍԻՐԱՀԱՐՎԱԾ,  
ԻՄ ՊԱՏԱՆԻ ԿՅԱՆՔՆ Է ՀԻՇԵԼ ՏԱԼԻՍ ԿԱՐԾԵՍ...

ԵՎ ՍԱՌՑԱՊԱՏ ՄԱՅԹԸ, ՈՐ ԻՍԿԱԿԱՆ ԴԵՄՔԻՆ  
ՁՆԻ ՓԱՓԿՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՐՊԵՍ ԴԻՄԱԿ ՀԱԳԵԼ,  
ԻՆՔՆ ԻՐԵՆ Է ՄԱՏՆՈՒՄ՝  
ՍՏՈՒՄ ԱՄԵՆ ՎԱՅՐԿՅԱՆ.  
ՈՒ ԵՍ ՄԱՅԹԱՔՈՒՄ ԵՍ՝

\_\_\_\_\_ ԵՏ ՈՒ ԱՌԱՋ,  
\_\_\_\_\_ ԴԵՄ-ԴԵՆ...

ՁՅՈՒՆՆ Է ԱՆՎԵՐՁ ՏԵՂՈՒՄ:

ԿԱՐԾԵՍ ՈՒՌԿԱՆ ԼԻՆԻ,  
ՀՄԿԱՅԱԿԱՆ ՄԻ ՑԱՆՑ՝  
ՆԵՏՎԱԾ ԵՐԿՆԻՑ ԵՐԿԻՐ:

ԱՍԵՍ ՀՄԿԱ ՄԻ ՁՈՒԿ ԱՅԴ ՈՒՌԿԱՆՈՒՄ ԳԵՐՎԱԾ,  
ՈՒՌԿԱՆՆ ԱՅԴ ՔԱՐՇ ՏԱԼՈՎ ՈՒ ՏԱՆԵԼՈՎ ԻՆՁ ՀԵՏ՝  
ԵՍ ԼՈՂՈՒՄ ԵՄ ԱՌԱՋ,

Ո՞ՐԻ -

\_\_\_\_\_ ՉԳԻՏԵ՛Մ:

ԱՅՍ ՁՅՈՒՆ-ՁՄԵՌՎԱ ՄԵՁ՝  
ՈՂՁ ԻՄ ՆԵՐՄՆ Է ՏԵՆԴՈՒՄ,  
ՆՈՐ ԴՈՂԷՐՈՑՔՈՎ Է ԱՍԵՍ ՀԻՎԱՆԴ ՀՈԳԻՍ,  
ՈՒՍՏԻ ՁԱՐՄԱՆԱԼԻ ՈՉԻ՛ՆՉ ՉԿԱ,  
ԹԵ ՄՏՔԵՐԸՍ ԲՈԼՈՐ ՁԱՌԱՆՑԱՆՔ ԵՆ ԹՎՈՒՄ...

ՁՅՈՒՆ Է ԳԱԼԻՄ: ԱՆՎԵ՛ՐՁ:

ՆԱ Ե՞ՐԲ ԴԱԴԱՐ ԿԱՌՆԻ:

ՈՒ Ե՞ՐԲ ԴԱԴԱՐ ԿԱՌՆԻ և ԱՅՍ ՁՐՈՒՅՑԸ ՄԵՐ,  
ՈՐ ՆՄԱՆ Է ԵՐԿՈՒ ԽՈՒԼԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ...

ԲԱՅՑ ԵՐԲ ՎԵՐԸՍԿՍԵՆՔ ՄԵՐ ՁՐՈՒՅՑԸ ԿԻՍԱՏ,  
ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԿԱՐԾԵՍ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ,  
ԻՆՉ ՈՐ ԿՈԿՎԱԾ-ՍՈԿՎԱԾ ԽՈՍՔԵՐԻ ՏԱԿ ԾԱՆՈԹ  
ՊԻՏԻ ՁԱՆԱՍ ԾԱԾԿԵԼ ԼՌՈՒԹՅՈՒՆԸՍ ՀՄԿԱ,  
ՈՐ ԴՐԱՆՈՎ, ՀԱՆԿԱՐԾ, ՔԵՁ ՉՎԻՐԱՎՈՐԵՄ:

ՄԻՇՏ ԽՈՐՀԵԼՈՎ ՆՈՒՅՆԸ՝ ՊԻՏԻ ՉԱՍԵՄ ՆԱԿ,  
ՈՐ ԻՆՁԱՆԻՑ ԵՐԲԵՔ ԴՈՒ ՉԵ՛Ս ԱՁԱՏՎԵԼՈՒ,  
ԻՆՉՊԵՍ ՉԵՍ ԱՁԱՏՎԻ Ո՛Չ ԹԵ ՄԻԱՅՆ ՓԵՇԻՑ,  
ԱՅԼ ՔՈ ՄԱՇԿԻ՛Ց ՆԱԿ,

ՈՐԻ ՎՐԱ

ԻՄ ՄԱՆԵՐՆ ԵՆ ԹՈՂԵԼ ԻՐԵՆՑ ԴԱՋՎԱԾՔԸ ԽՈՐ,  
ՈՐ ՉՊԻՏԻ ՁՆՁՎԻ ՄՈՌԱՅՈՒՄԻՑ ԱՆԳԱՄ...

ՊԻՏԻ ՉԱՍԵՄ ՆԱԿ,

ՈՐ ԱՉՔԵՐՍ ԷԼ ՓԱԿԵՄ՝

ԻՄ ՀԱՅԱՅՔԸ ԿՉԳԱՍ ԴՈՒ ՔՈ ՄԵՋՔՈ՛Վ ՆՈՒՅՆԻՍԿ,  
ԱՆԳԱՄ ՀԱՁԱՐԱՎՈ՛Ր ԿԻԼՈՍԵՏՐԻ ՎՐԱ:  
ՈՒ ՍԱՅԹԱՔԵՍ ԵԹԵ ԿԱՄ ՔԱՅԼԵՐԸԴ ԽԱՌՆԵՄ՝  
ՉՈՒՐ ՄԻ՛ ԿԱՐԾԻՐ, ԹԵ ԴԱ ԴԱՐՈՒՓՈՍԻՑ ԵՂԱՎ:

ԱՅԴ ԻՄ ՀԱՅԱՅՔՆ Է ՔԵՁ ՇՓՈԹԵՅՆՈՒՄ ՀԵՌՎԻՑ...

ԷԼԵԿՏՐՈԿԱՆ ԼԱՐԻՆ ՄԻՇՏ ԿԻՊ ՈՒ ՀՈՒՊ  
ԻՐ ԵՂԱՆՈՎ ԱՆԿՈԹ



\_\_\_\_\_ՏՐՈՒԵՅՔՈՒՄԸ  
\_\_\_\_\_ՄԵՐԹ-ՄԵՐԹ  
ՇԱՂ Է ՏԱԼԻՍ ԿԱՅԾԻ ԽՐՁԵՐ ԽԱՌՆ ՈՒ ԽՈՒԿ,  
ՇԱՂ Է ՏԱԼԻՍ ԱՅՆՊԵՍ,  
ԱՍԵՍ ԱՆՏԵՍ ՄԻ ՄԱՐԴ  
ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ Է ՋՈՂՈՒՄ  
ԽԱՎԱՐԻ ՄԵՋ,  
ՕՂՈՒՄ:

ՄԵՐ ՄՐՏԵՐՆ ԷԼ ՉԷ՞ ՈՐ ՋՈՂՎԱԾ ԷԻՆ ԻՐԱՐ,  
ՋՈՂՎԱԾ ԷԻՆ՝  
\_\_\_\_\_ԱՍԵՍ ԱՍՏԾՈՒ ՀԵՆՅ Ի՛Ր ՁԵՌՔՈՎ.  
Ո՛Չ ՄԻ ՄՊԻ ՉԿԱՐ ՋՈՂՄԱՆ ՏԵՂՈՒՄ:  
ՋՈՂՎԱԾ ԷԻՆ՝  
\_\_\_\_\_ԻՆՉՊԵՍ ՄՈՒԵԿՈՒԼՆ Է ՋՈՂՎԱԾ,  
ԵՎ ԱՏՈՄԸ...

ՈՒ ՄԵՆՔ - ԲԱԺԱՆՎՈ՞ՒՄ ԵՆՔ:

ՀԻՄԱ ԱՆԳԻՐ ԳԻՏԻ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ.  
ԵՐԲ ԱՆԲԱԺԱՆԵԼԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ՝  
ԱՆՋԱՏՎՈՒՄ Է ԱՀԵ՛Ղ ՄԻ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ:  
- ՎԿԱ՝ ԱՏՈՄՆ ԻՆՔԸ:

ԻՍԿ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ... ԾՆՈՒՆԴ ԿԱՌՆԻ  
ՄԻ ԱՅՆՊԻՄԻ՛ ԱՀԵՂ ՍԱՌՆԱՄԱՆԻՔ ՈՒ ՅՈՒՐՏ,  
ՈՐ ՉԻ ԿԱՐՈՂ ՉԱԶԴԵԼ ԵՂԱՆԱԿԻ՛ ՎՐԱ:  
- ՎԿԱՆ՝ ԲԿԵՌՆԵՐԸ...

ԻՐՈՔ՝  
\_\_\_\_\_ՍԱՌՆԱՄԱՆԻ՛Ք,  
ԱՅՆՊԻՄԻ՛ ՅՈՒՐՏ ԻՐՈՔ,  
ՈՐ ԿԱՐՈՂ Է ՆՈՒՅՆԻՄԿ ԱՀԱԲԵԿԵԼ  
ԴԵՌ ՆՈՐ ՄԻՐԱՀԱՐՎԱԾ ԱՅՆ ՋՈՒՅԳԵՐԻՆ,  
ՈՐՈՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԱՅԼ ՏԵՂ ՉՈՒՆԵՆ,  
ԲԱՅԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՁՄԵՌՆԱՇՈՒՆՉ:

ՏԵՂ ՉՈՒՆԵԻՆՔ ՄԵ՛ՆՔ ԷԼ:

ՈՒ ՅՐՏԻ ՄԵՋ ՁՄՌԱՆ  
ՔԱՅԼՈՒՄ ԷԻՆՔ՝  
ԱՍԵՍ ԿՈՒԿԸՐՏԵԼՈՎ  
ՈՉ ՄԻԱՅՆ ՁՅՈՒՆ-ՍԱՌՈՒՅՑ,  
ԱՅԼԿ ԺԱՄ-ԺԱՄԱՆԱԿ:

ԻՍԿ ՄԵՐ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻՑ ՈՒ ՌՈՒՆԳՆԵՐԻՑ  
ԸՆԴՀԱՏ ՊՈՌԹԸԿԱՅՈՂ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՔ  
ԱՍԵՍ ԾՈՒԽԸ ԼԻՆԵՐ ԱՅՆ ԼՈՒՌ ԿՐԱԿՈՑԻ,  
ՈՐ «ՍՈՒՅՈՒՑ» Է ԿՈՉՎՈՒՄ ՕՏԱՐ ԲԱՌՈՎ...

ՔԱՅԼՈՒՄ ԷԻՆՔ՝

\_\_\_\_\_ ԳՈՒՑԵ ՅՐՏԻՑ ՍՐԹՍԸՐԹԱԼՈՎ  
ՈՒ ԹԵՐԿԸՍ ՅՐՏԻՑ ՓՈՔՐ-ԻՆՉ և ԿՈՒՉ ԵԿԱԾ,  
ԲԱՅՑ... ՏԱՔԱՆՈՒՄ ԷԻՆ ՄԵՁ ՆԿԱՏՈՂ ՄԱՐԴԻԿ...

ՍԱՌՆԱՄԱՆԻՔԻ ՄԵՁ ԱՆԾԱՅՐԱԾԻՐ  
ՔԱՅԼՈՒՄ ԷԻՆՔ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՆԱԲԱՐ  
ԵՐԿՐԱԳԼԴԻ ԵՐԿՈՒ ՍԱՌԱԾ ԲԿԵՌՆԵՐԻ  
ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂՆԵՐՆ ԵՆ ՔԱՅԼԵԼ ՄԻ ՕՐ...

ԵՎ ՄԵՆՔ ԻՆՉՈ՞Վ ՉԷԻՆՔ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂ, ԱՍԱ՛:  
ԵՍ ՔԵՉ ԷՒ ԳՏԵԼ,  
ԳՏԵԼ ԷՒՐ ԴՈՒ Ի՛ՆՁ...

ՄԵՆՅԱԿՈՒՄ ԲՈՒՆ ԴՐԱԾ ՀՄԿԱ ՄԱՐԴԻ ՆՄԱՆ՝  
ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ ԻՐ ՈՍՏԱՅՆՆ Է ՓՈՌՈՒՄ  
ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉԸ:

ԵՐԿՈՒ ՄԱՏՈՎ  
ԵՍ ՄԵՂՄՈՒՄ ԵՄ ՆՐԱ ՍԱՊԱՏՆԵՐԸ ՄԵԿ-ՄԵԿ,  
ԵՎ ՈՐՏԵՂԻՅ-ՈՐՏԵՂ, ՉԱՆՅԱԾ ԵՐԿՈՒ ՎԱՅՐԿՅԱՆ,  
«ԱՎԵ ՄԱՐԻԱ»-Ն Է ՄՍԵՐԻՍ ՄԵՁ ԽՐՈՒՄ  
ՆՈՏԱՆԵՐԻ ՓՈՒՇԸ...

ՉԵ՞Ս ՆԿԱՏԵԼ ԱՐԴՅՈՔ,  
ՈՐ ՀԱՄՆՈՒՄ Է ՄԻ ՏԵՂ,  
ՍԱՐՍԸՌԱՋԴՈ՛Ւ ՄԻ ՏԵՂ,  
ԵՐԲ ՆՎԱԳՈՂ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ  
ԼՈԿ ՄԻ ԲԱՆ ԵՆ ՃՉՈՒՄ.  
-«ԶԱՐՄԱՆՈ՛ՒՄ ԵՍ»:

ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ Ե՛Ս ԷԼ,  
ՄԻԱ՛ՅՆ ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ:

ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ, ԹԵ ԱՅԴ ԻՆՉՊԵ՞Ս ԵՂԱՎ, ԻՆՉՊԵ՞Ս,  
ՈՐ ԿԱՐՃ ՊԱՉԻ ՓՈԽՎԵՑ ՄԵՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ ԵՐԿԱՐ,  
ԵՎ ԺՊԻՏԸՍ ՓՈԽՎԵՑ ՔՄԾԻԾԱՂԻ...

...ԽԱՎԱՐԱՏՅԱՑ ԷԻՆ ԱՉՔԵՐՆ ԻՄ ՍԿ,  
ՄԹԱՀԱԼԱԾ ԷԻՆ ԱՉՔԵՐՆ ԻՄ ՄՈՒԹ:  
ԶՈՒՅԳ ԼՈՒՍԱՐՉԱԿ ԷԻՆ ԿԱՐԾԵՍ ՆՐԱՆՔ:

ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ, ԹԵ Ո՞ՆՑ, Ո՞ՆՑ ՊԱՏԱՀԵՑ,  
ՈՐ ԲՆԱԿՎԵՑ ԱՅՆՏԵՂ ՄԹԻՆ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԻՆՉՊԵՍ ՈՐ ՉՂՋԻԿԸ ՔԱՐԱՆՉԱՎՈՒՄ...

...ԴՈՒ ՇԱՏ ՀԱՃԱԽ ԷՒՐ ԻՄ ՄԱՋԵՐԸ ԳՈՎՈՒՄ,  
ՈՐՈՎՂԵՏԿ ՈՒՐԻՇ ԳՈՎԵԼՈՒ ԲԱՆ ՉՈՒՆԵՄ:  
ԵՎ ԻՆՁ ԶԳՈՒՄ ԷՒ ԶՈՐԵ՛Ղ ԶԱՐՄԱՆԱԼԻ:

ԶԱՐՄԱՆՈՒՄ ԵՄ, ԹԵ Ո՞ՆՑ ԻՄ ՄՏՔՈՎ ԻՄԿ ՉԱՆՅԱՎ,

ՈՐ ԿԱՐՈՂ ԵՄ ՄԻ ՕՐ ԴՈՒ ԴԱԼԻԱ ԴԱՌՆԱԼ  
ԵՎ ՔՈ ՁԵՌՔՈՎ ԽՈՒՁԵԼ ՄԱՋԵՐԸ ՄԱՍՍՈՆԻԴ...

...ԻՄ ՁԵՌՔԵՐԻ ԳՈՐԾԸ ՔԵՁ ՄԻՐԵԼԸ ԷՐ ՈՐ ԿԱՐ՝  
ՓԱՅԵԼ-ՓԱՅՓԱՅԵԼԸ,  
ԳՐԿԵԼ-ԳՈՒՐԳՈՒՐԵԼԸ:  
ՀԻՄԱ ՆՐԱՆՔ Ի՞ՆՉ ԵՆ.  
ԽԵՂՃ ԳՈՐԾԱԶՈ՛ՒՐԿ:  
ՈՒ ԹԵ ՆՐԱՆՑ ՆՈՒՅՆԻՄԿ ՆՇԱՆԱԿԵՆ ՆՊԱՍՏ՝  
ՊԻՏԻ ՀՐԱԺԱՐՎԵ՛Ն:

ՉԶԱՐՄԱՆԱ՞Մ...

...ՆԵՐՍԸՍ ՀԱՅԱԴՈՒԼ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ՀԻՄԱ,  
ՈՒ ՄԻՐԱԴՈՒԼ՝ ՄԻՐՏԸՍ:  
ԵՎ ՈՏՆԵՐՍ ԵՆ ՄԻԱՅՆ, ՈՐ ՉԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ  
ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ.  
\_\_\_\_\_ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՆՐԱՆՔ  
ԿՈՇԿԱՏԱԿ ԵՆ ՄԱՇՈՒՄ:

ՉԶԱՐՄԱՆԱ՞Մ...

ՈՒ ՄՏՔԵՐՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ,  
ՆՈՒՅՆ ՓՈՐՁԱՆՔՆ ԵՆ ՓՈՐՁՈՒՄ.  
-ՄԿԸՍԵԼՈՎ ՔԵՁՆԻՑ՝ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՔԵՁ,  
ԱՅՆ ԸՆՏԱՆԻ ՍՈՎՈՐ ԿԵՆԴԱՆՈՒ ՊԵՍ,  
ՈՐ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՎ ՏՆԻՑ՝ ՏՈՒՆ Է ԳԱԼԻՍ ՎԵՐՁՈՒՄ,  
ԻՄԿ ՏՈՒՆՆ ԱՐԴԵՆ ՉԿԱ՛:

ՉԶԱՐՄԱՆԱ՞Մ...

ՉԶԱՐՄԱՆԱ՞Մ, ԱՍԱ՛,  
ԻՆՉՊԵ՞Ս ՉԶԱՐՄԱՆԱՍ,  
ՈՐ ԱՅՍՔԱՆԻՑ ՀԵՏՈ ԵՍ, ՄՏՈՎԻՆ,  
ՔՈ ԱՆՈՒՆՆ ԵՄ ՏԱԼԻՍ՝ ՇԱ՛Տ ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ,  
ՔԱՆ ՎՏԱՆԳՎԱԾ ՆԱՎԻ ՌԱԴԻՈ-ՀԵՌԱԳՐԻՉԸ  
ԻՐ ԱՀԱԲԵԿ «SOS»-Ը...

ԴՈՒ ՓՈՐՁՈՒՄ ԵՄ ԳՏՆԵԼ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ.  
«ՄԱՅԹԱՔՈՒՄ ԵՆ... ԸՆԿՆՈՒՄ... ԲԱՅՑ ՉԷ՞ ՈՐ ԵՍ... »:

ԻՄԿ ԵՍ ՎԵՐՀԻՇՈՒՄ ԵՄ ՔՈ ԵՐԱԶԸ.  
ԻԲԸԸ ԹԵ ԸՆԿԵԼ ԵՍ ՈՒ ՈՏՆԵՐԸԴ ՋԱՐԴԵԼ,  
ԲԱՅՑ... ՉԵՍ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՔԱՅԼԵԼ Ո՛Չ ԹԵ ԻՆՔԸԴ,  
ԱՅԼ Ե՛Ս, ՔՈ ՓՈԽԱՐԵՆ, Ե՛Ս ՉԵՍ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ...

Ե՛Ս, ՈՐ ԵՐԱԶՆԵՐԻ ՉԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԲՆԱՎ,  
ՀԻՄԱ ԻՆՉՊԵ՞Ս ՉԱՍԵՍ,  
ԱՍԱ՛, ԻՆՉՊԵ՞Ս ՉԱՍԵՍ,  
ՈՐ ԱՅՍ ԵՐԱԶԸ ՃԻ՛ՇՏ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ:

ՔՈ՛ՆՏՆԵՐՆ ԵՆ ՋԱՐԴՎԵԼ,  
ՔԱՅԼԵԼ Ե՛Ս ՉԵՍ ԿԱՐՈՂ...

ԴՈՒ ՄԵՂՔ ԲՆԱ՛Վ ՉՈՒՆԵՍ,  
ԵՍ ԱՅԴ ԳԻՏԵ՛Ս, ԳԻՏԵ՛Ս:  
ԵՎ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՑԱՎԸՍ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՓՈԽԵԼ,  
ԲԱՅՑ և ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՍ, ՈՐ ԴԱ ՇԱՏ Է ՆՄԱՆ  
ՄԻ ԱՉՔԸ ՇԻԼ ՄԱՐԴՈՒ ԱՅՆ ՁԳՏՈՒՄԻՆ,  
ԵՐԲ ՆԱ ՆԿԱՐՎՈՒՄ Է ՄԻՇՏ ԿԻՍԱԴԱՐԶ,  
ԿԱՐԾԵՍ ՊԻՏԻ ԱՉՔԸ ՇՏԿԻ ՆԿԱՐՎԵԼՈՎ...

ԵՎ ՍԵԱՀԵՐ-ՍԵԱՉ ԿԱՐՈՏ ԿՆՈՋ ՆՄԱՆ,  
ԻՆՁ ԳԻՇԵՐՆ Է ԿԱՆՉՈՒՄ-ՀՐԱՎԻՐՈՒՄ՝  
ՏԱՔ ԺՊԻՏՈՎ ՋԱՌ-ՎԱՌ ԻՐ ԼՈՒՅՍԵՐԻ,  
ԻՐ ԳԻՆԴԵՐՈՎ ԼԱՄՊԵ,  
ՌԵԿԼԱՄ-ՀԵՌԱԳՐԵՐՈՎ:  
ԵՎ ՉԳԻՏԻ ԽԵՂՃԸ,  
ԵՎ ՉԳԻՏԻ, ԹԵ ԵՍ,  
Ե՛Ս, ՈՐ ՀԱՅԱՑՔՈՎ ԻՄ  
ԱՆՑՆՈՂ-ԴԱՐՁՈՂ ԿԱՆԱՆՑ  
ՄԵԽՈՒՄ ԷԻ ՄԻ ՊԱՀ ԻՐԵՆՑ ՏԵՂՈՒՄ  
ԵՎ ՏԻՐԱԲԱՐ ԱՆԽՈՍ ՀՐԱՄԱՅՈՒՄ.  
«ԿԱՆԳՆԻՐ՝ ՔԵՁ ԱՉՔԵՐՈՎ ՄԻՐԵ՛Ս ՄԻ ՔԻՉ», -  
ԵՍ ԴԱՐՁԵԼ ԵՍ ՀԻՄԱ ԻՆՉ-ՈՐ ԷԱԿ ԱՆՍԵՌ...

ՈՒ ԵՍ ԴՈՒՐՍ ՉԵՍ ԳՆՈՒՄ,  
ԵՍ ԻՄ ՏԱՆՆ ԵՍ ՄՆՈՒՄ,  
ՈՐՏԵՂ ՄԻ ԱՅՆՊԻՄԻ՝ ՄԹՆՈԼՈՐՏ Է ՀԻՄԱ,  
ԱՅՆՊԻՄԻ՝ ԳԱՐՇ ՄԻ ՕԴ, ՈՐԻՑ ՀԱՎԱՆՈՐԵՆ  
ԿՍԱՏԿԵԻՆ և՛ ՃԱՆՃ, և՛ ՓԱՅՏՈՋԻԼ...

ԻՍԿ ԱՉՔԵՐԻՄ ԱՌԱՋ, ՆՈՒՅՆ ՄԵՂԱՆԻՆ,  
ՀԱՐՅԱԿԱՆԻ ՊԵՍ ԿԵՌ ՆՈՒՅՆ ԼԱՄՊՆ Է ՄԻՇՏ ՏՆԿՎԱԾ՝  
ԿՈՊԻԴ ԱՅՆՔԱ՛Ն ՆՄԱՆ ԼՈՒՍԱՄՓՈՓՈՎ:  
ՈՒ ՄՏՔԵՐՍ ԵՆ ՀԻՄԱ ԻՄ ՈՒՂԵՂԸ ԽԱԾՈՒՄ՝  
ԻՇԱՄԵՂՈՒՆԵՐԻ ԱՆՏԵՍ ՊԱՐՄԻ ՆՄԱՆ...

ՈՒ ԲԵՐԱՆԸՍ ՀԻՄԱ ԱՍԵՍ ԴՈՒՌՆ Է ԴԱՌՆՈՒՄ  
ԱՅՆ ՄՈՒԹ ՔԱՐԱՆՁԱՎԻ, ՈՐՏԵՂ ՁՄՌԱՆ ՄՈՒՏԻՆ  
ՏԱՐԹՆ ԵՆ ԿՐԱԿ ՏԱԼԻՍ ՀՈՎԻՎՆԵՐԸ...

ԵՎ ԻՄ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՆՈՐԻՑ ՆՄԱՆՎՈՒՄ Է  
ՄԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԿԵՌՄԱՆ ԿԱԾԱՆՆԵՐԻՆ...

Ա՛Խ, ԱՅԴ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ...

ԹԵ ԼԻՆԵԻ ԱՅՆՏԵՂ  
ԵՎ ԱՅՍ ԿԵՍԳԻՇԵՐԻՆ ԵԼՆԵԻ ԲԱԿ՝

ԱՅՍ ԱՐԹՈՒՄՆԻ ԾԱՆԸՐ ՄՂՁԱՎԱՆՁԻՑ  
ԴՈՒՐՍ ՀԱՆԵԼՈՒ ԲԱՐԻ ԿԱՄԵՑՈՒԹՅԱՄԲ,  
ԻՆՁ ԿԴԻՄԱՎՈՐԵՐ ՄԻ ՈՂՁ ՀԱՉՈ՛Ղ ԵՐԿԻՆՔ...

ԴՈՒ ՉՊԻՏԻ՛ ՏԵՍՆԵՍ ԱՅԴ ԵՐԿԻՆՔԸ ԵՐԲԵՔ,  
ԵՎ ՉՊԻՏԻ՛ ԶԳԱՍ, ՈՐ ԱՅԴ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ  
ԵՐԲ ՆԱՅՈՒՄ ԵՍ ՎԵՐԱ՝  
ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԿՆԻՆ,  
ԱՍԵՍ ԶՈՒՅԳ Ա՛ՉՔ ՉՈՒՆԵՍ,  
ԱՅԼ ԶՈՒՅԳ ՀԵՌԱԴԻՏԱ՛Կ...

ԹԵ ԼԻՆԵԻ ԱՅՆՏԵՂ  
ՈՒ ԴՈՒՐՍ ԳԱՅԻ ՀԻՄԱ  
ՁԵՂՆԱԾԱԾԿ ՈՒ ԿԱՎԵ ՄԵՐ ՏՆԱԿԻՑ,  
«ՔԱՐ-ԿՇԵՌՔԸ» ՊԻՏԻ ԱՉՔԵՐԻՍ ԴԵՍ ՃՈՃՎԵՐ:

ԻՆՁ ԹՎՈՒՄ ԷՐ, ԹԵ ՆԱ ԻՐ ԹԱԹԵՐՈՎ  
ԼՈՒՅՍ ՈՒ ՍՈՒԹՆ Է ԿՇՌՈՒՄ ԱԶՆՎՈՐԵՆ,  
ՈՐ ՀԱՇՏԵՑՆԻ ԵՐԿՈՒ ՎԻՃՈՂ ՀԱՐԿԱՆԻ՝  
ԳԻՇԵՐ-ՑԵՐԵԿՎԱՆԸ:

ԻՍԿ ՀԻՄԱ ՆԱ  
ՀԱՎԱՆԱԲԱՐ ՊԻՏԻ ԻՄ ԿՈՐՈՒՍՏԸ ԿՇՌԵՐ՝  
ՄԻ ՆԺԱՐԻՆ ԴՐԱԾ ՔՈ ԱՐԴԱՐԱՅՈՒՄԸ...

ԳԱՐՆԱՆ ՔԱՅԼԸ ԵՍ ԼՍՈՒՄ.  
ՀԱՍԵՀԱՍ Է ԱՐԴԵՆ:

ԻՍԿ ԴՈՒ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՍ:  
- ԳՆԱՍ ԲԱՐՈ՛Վ:

ԳՆԱ՛, ՍԱԿԱՅՆ ՀԻՇԻ՛Ր.  
ԿԱՆ ԱՅԳԻՆԵՐ,  
ՈՐՈՆՑ ՇՈՒՏՈՎ ԵՐԲ ԴՈՒ ԱՅՅԻ ԳՆԱՍ,  
ԾԱՆՈԹ ԾԱՌԵՐԸ ՔԵՁ ՊԻՏԻ ՀԱՐՑՆԵՆ ԱՆՇՈՒՇՏ.  
- ԻՍԿ Ո՞ՒՐ Է ՆԱ... Ո՛ՆՑ ԹԵ...

ԴՈՒ ՄՏԱԾԻՐ,  
ԹԵ Ի՛ՆՉ ՊԻՏԻ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԵՍ:

ԿԱ ՆՍՏԱՐԱՆ ԿԱՆԱՉ:  
ՊԻՏԻ ԿԱՆՉԻ ՆԱ ՔԵՁ,  
ԵԹԵ ՄԻՆՉԻ ԱՆԳԱՄ ՓՈԽԵՍ ՃԱՆԱՊԱՐՀԸՂ,  
ԵՎ ԻՐ ԿԱՆԱՉ ԴԵՍՔԸ ԹՈՒԽ ԲԻԲԵՐԻԴ ՀԱՌԱԾ՝  
ՊԻՏԻ ՀԱՐՑՆԻ.  
- Ո՞Վ Է ԱՅՍ ՕՏԱՐԸ ԿՈՂՔԻԴ...

ԼԻՃ ԿԱ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ,  
ԿԱՆ ՆԱՎԱԿՆԵՐ ԱՓԻՆ:

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՀԵՆՅ ՈՐ ԹԻԵՐՆ ԱՆՎԱՐԺ ԲԱՆԵՆ՝  
ՋՈՒՐԸ ՊԻՏԻ ՀԱՐՅՆԻ.  
-Ո՞ՆՅ ԹԵ... ԱՌԱՆՅ ՆՐԱ՞...

ՃՈՃ ԿԱ ԼՃԻ ԱՓԻՆ,  
ՀՄԿԱՅԱԿԱ՛Ն ՄԻ ՃՈՃ,  
ՈՐ ՊՏՈՒՅՏ Է ԳՈՐԾՈՒՄ ՇՈՒՐՁԱՆԱԿԻ  
ԵՎ ՋՈՒՅԳԵՐ Է ՃՈՃՈՒՄ՝  
ՆՐԱ՛ ՀԱՄԱՐ ԿԱՐԾԵՍ,  
ՈՐ ՆՈՐ ԾՆՎԱԾ ՍԵՐԸ ՀԱՍՈՒՆԱՆԱ:

ՃՈՃՆ ԱՅԴ,  
ՔԵՁ ՏԵՍՆԵԼՈՎ ՈՒՐԻՇՇԻ ՀԵՏ՝  
ԻՐ ՊՏՈՒՅՏՈՎ ՊԻՏԻ ԳԾԻ ՄԻ ՄԵ՛Ծ... ՋՐՈ:

ԵՍ ՉԵՄ ԵՂԵԼ ՀԱՄԼԵՏ,  
ՉԵՄ ԷԼ ՈՒՋՈՒՄ ԼԻՆԵԼ.  
«ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼԸ» ՄԵՋԱՆԻՑ ՉԷ ԿԱԽՎԱԾ...

ԵԹԵ ՊԵՏՔ Է, ՈՐ ԵՍ Ո՛Չ ԻՆՁ ՆՄԱՆ ԼԻՆԵՍ,  
ԱՅԼ ԱՆՊԱՏՃԱՌ ԻՆՉ-ՈՐ ՈՒՐԻՇ ՄԵԿԻ ՆՄԱՆ,  
ԱՊԱ ԵՍ ԿՈՒՋԵԻ, ՇԱ՛Տ ԿՈՒՋԵԻ  
ԼԻՆԵԼ ՇԵՔԸՍՊԻՐՅԱՆ ՄԻ ԽԵՂԿԱՏԱԿ,  
ՈՐ ԱՍԵԻ ՀԵՆՅ ԱՅՆ,  
ԻՆՉ ԲՈԼՈՐԸ ԳԻՏԵՆ,  
ԲԱՅՅ ԲԱՐՁՐԱՋԱՅՆ ԱՍԵԼ ՉԵՆ ՀԱՆԴԸԳՆՈՒՄ...

ՍԱԿԱՅՆ ԵՍ ԴԵՌԿՍ ՔԵՁ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՅՆՔԱՆ,  
ՈՐ, Է՛Յ, ԴՈՒՐՍ ԵՄ ԳԱԼԻՍ ԻՄ ԵՐԱՋԱԾ ԴԵՐԻՅ  
ԵՎ ԿԱՇԽԱՏԵՄ ՀԱԳՆԵԼ ԱՌԼԵԿԻՆԻ ԴԻՄԱԿ.

-ՍՈՒՏ ՍԵ՛Ր ՊԻՏԻ ԽԱՂԱՄ, ԱՆՀԱ՛ՅՏ ԿՈԼՈՍԲԻՆԱ...

ԱՐԴՅՈՔ ՉԷՒ՞Ր ՈՒՋԻ ԳԵԹ ՄԻ ՊԱՏԱՌ ԼԵԳԵՆԴ:

ԱՍՏՎԱԾ, ԵՐԲ ՄՈՎՍԵՍԻՆ ԳԵՐԱՊԱՏՎԵՅ՝  
ԲՈԼՈՐԻ ՄԵՋ ՆՐԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼՈՎ,  
ԵՎ ՊԱՏՎԻՐԵՅ ԻՐ ՋԱՅՆԸ ՀԱՍՅԸՆԵԼ  
ՄԵՂՔԵՐԻ ՄԵՋ ԹԱՂՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ,-  
ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ԷՐ՝  
ՉԷՐ ՆԿԱՏԵԼ ՄԻ ԲԱՆ.  
ԻՐ ՄՈՎՍԵՍՆ ԷՐ ԹԼՎԱ՛Տ, ԿԱԿԱ՛Ջ, ԾԱՆՐԱԼԵՁՈ՛Ւ:

ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ Ի՛ՆՉ ԿԱ.  
ԱՄԵՆԱՋՈՐ Է ՆԱ:  
ԵՎ ԹՈՒՅԼ ՏՎԵՅ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԻՐ ՋՐՈՒՅՅՆԵՐԻՆ  
ՆԵՐԿԱ ԼԻՆԻ ՆԱԿ ԱՀԱՐՈՆԸ,  
ՈՐ, ԻՀԱՐԿԵ, ՈՒՆԵՐ ՃԱՐՏԱՐ ԼԵՁՈՒ:

ՄՈՎՍԵՍԻ ՊԵՍ ԹԼՎԱ՛Տ,  
ՄՈՎՍԵՍԻ ՊԵՍ ԿԱԿԱ՛Զ՝  
ԵՍ ՈՐՏԵՂԻ՞Ց ԳՏԼԵՍ ՄԻ ԱՀԱՐՈՆ,  
ՈՐ ՔԵԶ ՍԻՐՈՂ ՍՐՏԻՍ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐՆ ԱՄԵՆ  
ԱԿԱՆՋԻԴ ՄԵՋ ԹՈՂՆԻ՝  
ՀԵՌԱՆԱԼՈՒՑՍ ԱՌԱՋ:

ՍԱԿԱՅՆ ԻՆՉԻ՛Դ ԵՆ ՊԵՏՔ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐՆ ԻՄ ՍՈՒՏ.  
ՉԷ՞ ՈՐ ԱՄԵՆ ՆՈՐ ՍԵՐ ԻՐ ՆՈՐ ՕՐԵՆՔՆ ՈՒՆԻ,  
ՈՒՐԵՄՆ ՈՒՆԻ ՆԱԿ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆ ԻՐ ՆՈՐ...

ՈՒ ԵՍ ՊԻՏԻ ՄԵՌՆԵՍ ՈՐՈՇԱԿԻ ՄԱՀՈՎ.  
-ՄԻ ՕՐ ԵՍ ԽԵՂԴԱՄԱ՛Հ ՊԻՏԻ ԼԻՆԵՍ,  
ՍԱԿԱՅՆ Ո՛Չ ԹԵ ՋՐՈՒՄ,  
\_\_\_\_\_ ԹԵՊԵՏ ՄԻՆՉԿ ԱՅՍՕՐ  
ՉԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԳՈՆԵ ԿՅԱՆՔՈՒՄ ՓՈ՛ՔՐ-ԻՆՉ ԼՈՂԱԼ:  
ԱՊՐԱԾ-ՋԳԱՅԱԾԸՍ ԱՄԵԼ ՉՋՈՐԵԼՈ՛ՒՑ  
ԵՍ ԿԽԵՂԴՎԵՍ ՄԻ ՕՐ՝  
\_\_\_\_\_ ԻՆՉՊԵՍ ՄԱՀԱՆՈՒՄ ԵՆ  
ԿՈԿՈՐԴԻ ՄԵՋ ԽՅՎԱԾ ՍՈՒՐ ՈՍԿՈՐԻՑ...

ԲՈԼՈՐ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ՝  
\_\_\_\_\_ ՔԱՄԻՆԵՐԻ ԺՈՂՈՎ,  
ԻՍԿ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ՝  
\_\_\_\_\_ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՔԻ.  
-Ի՞ՆՉ ԵՆ ՔՆՆՈՒՄ ԱՐԴՅՈՔ,  
Ի՞ՆՉ ԿՈՐՈՇԵՆ:  
ԻՍԿ ԵՍ...  
\_\_\_\_\_ ԱՐԴԵՆ ԽՈՐՀԵԼ  
\_\_\_\_\_ ՈՒ ՄՏԱԾԵԼ ԵՍ ԵՍ,  
ԻՆՉ ՈՐ ԾԱԾՈՒԿ ԷՐ ԴԵՌ՝  
ԱՐԴԵՆ ԲԱՅԵԼ ԵՍ ԵՍ,  
ԵՎ ՄԵԿԸՆԴՄԻՇՏ՝ ՑԱՎՈՎ՝ ԱՐԴ ՀԱՍԿԱՅԵԼ ԵՍ ԵՍ,  
ՈՐ ԴՈՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԻՄ ՍԱՐՍԱՓՆ ԵՍ ԱՆԱՆՑ.  
-ԹՈՒՅԼ ՏՈՒՐ ՄԻ ՔԻՉ ՔՆԵ՛Ս...  
ԵՎ ԱՅՆ ԱՓՆ ԵՍ ՀԵՌՈՒ,  
ՈՐ ԸՆԿԱԾ Է ԱՆԾԻՐ ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ԱՆԴԻՆ.  
-ԵԹԵ ԱՅՍԵՂ՝ ԳԻՇԵՐ,  
ԱՅՆՏԵՂ ՑԵՐԵԿ Է ՎԱՌ...

ԱՅՍ ԱՌԱՋԻԳ ԿՅԱՆՔԻ ՑԱՏԿԱՆ ԼԱՐԻ ՎՐԱ  
ԹԵ ԵՍ՝ ԼԱՐԱԽԱՂԱՑ,  
ԴՈՒ ԱՅՆ ՉՈՂՆ ԵՍ ՓՐԿԻՉ,  
ԱՌԱՆՑ ՈՐԻ ՎԱՂՈՒՑ ՓՇՐԵԼ ԷՒ ԳԱՆԳԸՍ...

ԴՈՒ՝  
\_\_\_\_\_ ՎՐԻՊԱ՛Կ ԻՄ ՍԵՐ,  
ԵՎ ԱՅՆՊԻՍԻ՝

ՈՐԻՆ ՇՏԿՈՒՄ ՉԿԱ,  
ՈՒ ԴՐԱՆԻՑ  
ԱՂՃԱՏՎՈՒՄ Է ԿՅԱՆՔԻ ԻՄԱ՛ՍՏԸ ՈՂՁ...

ԵՎ ԻՆՁ Ի՞ՆՉ Է ՄԵՆՈՒՄ, ՈՐ Ի՞ՆՉ ԱՆԵՄ:

ԹԵ ԻՄ ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԵՍ ԱՐՁԱՆՆԵՐ ՇԻՆԵՄ՝  
ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՄԿՈՒՅՆ ՄԻ ԿՌԱՏՈՒՆ ԴԱՌՆԱԼ,  
ՈՒՐ ԿԱՐՈՂ Է ԱՆԹԻՎ ՏՈՏԵՄՆԵՐԻ  
ՄԻ Ո՛ՂՁ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԼԻՆԵԼ,  
ԲԱՅԻ ՇԼԻ՛Ց ԳՈՒՑԵ,  
ՈՐ ՏՈՏԵՄՆ ԷՐ ԿԱՐԾԵՄ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԻՐՈ...

ՍԱԿԱՅՆ ԿՈՒՌՔ ԵՆ ԿԵՐՏՈՒՄ ԼՈԿ ՀԱՎԱՏԻ՛Ց ԴՐԴՎԱԾ  
ԵՎ ՀԱՎԱՏԻ՛ ՀԱՄԱՐ,  
ԻՆՉ ԵՍ ՉՈՒՆԵՄ ՀԻՄԱ,  
ՈՒ ԹԵ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՄ՝  
Ա՛ՅԴ ՊԱՏՃԱՌՈՎ...

ՈՒ ԵՍ ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԽԱՂԱԼԻՔ ԵՍ ՇԻՆՈՒՄ,  
ՈՐ... ԻՆՁ ՆՄԱՆ ՏԱՐԵՑ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԽԱՐԵՄ...

ԵՎ ԻԶՆՈՒՄ Է ԱՀԱ ՄԻ ԳՈԳԱՎՈՐ ԳԻՇԵՐ,  
ԱՍԵՄ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՄԻ ԿԱՓԱՐԻՉ ՄՐՈՏ:  
ԵՎ ԶԳՈՒՄ ԵՍ ՀԻՄԱ ԻՄ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՇՎԻՆ,  
ՈՐ - ՀԱԿԱՌԱԿ ԽԵԼՈՔ ՕՐԱՑՈՒՅՑԻ ՊԵՐՄԱՆ -  
ԳԻՇԵՐՆԵՐՆ ԵՆ ԱՃՈՒՄ ՑԵՐԵԿՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ...

ԴՐՍՈՒՄ ՎՐԵՋՈՒՄ Է ՍԱՆՁԱԿՈՏՈՐ ՔԱՄԻՆ՝  
ԻՐ ԶԱՄԲԻԿԻՑ ԶՐԿՎԱԾ ՀՈՎԱՏԱԿԻ ՆՄԱՆ:  
ԵՎ ԻՄ ԿՈՒՐԾՔՆ Է ԻԶՆՈՒՄ ՈՒ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ՇՈՒՏ-ՇՈՒՏ՝  
ԱՆԽՂՃՈՐԵՆ ՔՇՎԱԾ ՁԻՈՒ ԿՈՂԵՐԻ ՊԵՍ...

ՄԵ՛Կ ԷԼ ԱՆԱԿՆԿԱ՛Լ,  
\_\_\_\_\_ ՌԱԴԻՈ-ԱԼԻՔՆԵՐՈՎ,  
\_\_\_\_\_ ԱՌԱՆՑ ԴՈՒՌ ԲԱԽԵԼՈՒ՝  
\_\_\_\_\_ ՕԳՆՈՒԹՅԱՆ Է ԳԱԼԻՄ  
ԲԱԽԸ ԲԱՐՈՒԹՅԱՄԲ ԻՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ:  
ԱՆՇՈՒՆՉ ԵՐԳԵՀՈՆԸ ՏԱՌԱՊՅԱԼ Է ԴԱՌՆՈՒՄ.  
ԸՆԿՆՈՒՄ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝  
\_\_\_\_\_ ԱՎԱՂԱՆՔԻ ԾԽՈՎ  
ՃՇՄԱՐՏՈՒՄ Է ՍԵՐԸ ԶՈՒԳԱԿՇԻՌ ՑԱՎԻՆ  
ԵՎ ԱՆՁՆԱԴԱՏ ԽՈՍՔՈՎ ՊԱՏԺԱՊԱՐՏՈՒՄ ԻՐԵՆ:

ՈՒ ԵՍ ՎԵՐԱՆՈՒՄ ԵՄ,  
ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ ՊՈԿՎՈՒՄ,  
ՈՒ ԵՍ ԿՈՐՅԸՆՈՒՄ ԵՄ ԶԳԱՑՈՒՄԸ ԿՇՈՒԻ:  
ԲԱՅՑ... ՀԻՇՈՒՄ ԵՍ ՀԱՆԿԱՐԾ,  
ՈՐ ԱՅՍՊԵՍ ԷՐ ԼԻՆՈՒՄ,



ԵՐԲ ԳԼՈՒԽԸՆՍ ՀԱՆԳՉՈՒՄ ՔՈ ԾՆԿՆԵՐԻՆ  
ՈՒ ՃԱԿԱՏՍ ԷՐ ՇՈՅՎՈՒՄ ՔՈ ԱՓԵՐՈՎ ՏԱՔՈՒԿ:

ՎԵՐԱՑՈՒՄԻ ԱՅՂ ԿԱՐՃ-ԵՐԿԱՐ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐԻՆ  
ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԷՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՐԵՆ,  
ՈՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ և ԻՍԿԱՊԵ՛Ս ՈՐ ԿԱՆ  
ՈՒՐԻՇ ՄՈԼՈՐԱԿՆԵՐ և ԱՇԽԱՐՀՆԵՐ ՈՒՐԻՇ,  
ՈՐՏԵՂ ՉԿԱ ԿՇԻՌ ՈՒ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ...

...ՀԻՄԱ ԿՇՌՈՒՄ ԵՍ ԵՍ ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՉՈՐՍ ՓՈՒԹ,  
ԵՎ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՀՈՂՆ ԻՆՁ ԿՐԵԼ.  
-ՆՐԱ ԿԵՂԽԻ ՄԵՋ ԻՄ ՈՏՆԵՐՆ ԵՆ ԽՐՎՈՒՄ՝  
ՄԵՐ ՈՒ ԿՈՐՈՒՍՏ ՉԱՓՈՂ ԿԱՐԿԻՆԻ ՊԵՍ...

ԲՔԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻՑ ԾԱՌԵՐՆ ԱՀԱ  
ԽԵՂՃ-ԽԵՂՃ ԿԿՈՑՈՒՄ ԵՆ ԱՉՔԵՐՆ ԻՐԵՆՑ:  
Ե՛Ս ԵՍ ԱՐԴՅՈՔ ԼԱԼԻՍ,  
ԹԵ ԱՅՂ՝ ՉՅՈՒՆՆ Է ՀԱԼՉՈՒՄ  
ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ՋԵՐՄԱԾ ԴԵՄՔԻՍ ՎՐԱ...

ԻՍ ՏՂԱՄԱՐԴ ՏԵՂՈՎ ԼԱՑ ԵՍ ՈՒԶՈՒՄ ԼԻՆԵԼ:  
Ի՛ՆՉ ԿԱ ԱՄԱՉԵԼՈՒ.  
ՀԱՊԱ ԻՆՉՊԵ՛Ս,  
ԲԱ Ո՛ՆՑ...

ՉԷ՞ ՈՐ ՀԻՄԱ ԵՍ ՄԻ ԹԱՆԿ ՄԵՌԵԼ ԵՍ ԹԱՂՈՒՄ,  
ԱՅՆ ԷԼ՝ Ո՛ՂՋ ՈՒ ԱՌՈ՛ՂՋ,  
ԱՊՐՈ՛Ղ ՈՒ ԿԵՆԴԱՆԻ՛...

ԳԻՏԵ՛Ս, ԹԵ ԻՆՉՊԵ՛Ս ԵՆ ՄԵՌԵԼԱՏԵՐ ՄԱՐԴՈՒՆ  
ՄԽԻԹԱՐՈՒՄ ՄԵՐՈՆՔ՝  
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԻԿ.  
«ԱՍՏՎԱԾ ՁԵՌԻՑԴ ԱՌԱՎ,  
ԹՈՂ ՄՐՏԻ՛ՑԴ ԷԼ ԱՌՆԻ»:

ՔԵՋ ԻՄ ՁԵՌՔԻՑ ԱՌԱ՛Ն.  
ՄԵՌԵԼԱՏԵՐ ԵՍ ԵՍ:  
ԻՍԿ Ե՞ՐԲ ՊԻՏԻ ԳՆԱՍ և ԻՍ ՄՐՏԻ՛Ց, ՄՐՏԻ՛Ց...

ԻՍԿ ԹԵ Ի՛ՆՉ Է ԼԻՆՈՒՄ ԻՍ ՄՐՏԻ՛ ՀԵՑ, ԳԻՏԵ՛Ս:  
ՀԱՐՄԱՐ ԲԱՌԸ ԳՏՆԵԼ ԱՅՆՔԱՆ ՀԵՇՏ ՀԻՄԱ,  
ԻՆՉՔԱՆ ՈՐ ԱՍՏԸԾՈՒՆ ԲԱԿՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼԸ:

ԵՎ ԱՅՍԵՂ Է, ԱՀԱ, ՈՐ ՉԵՍ ԿԱՐՈՂ  
ՉՆԱԽԱՆՁԵԼ,  
\_\_\_\_\_ԹԵ ԿԱՆ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐ,  
ՈՐ և՛ ԲԱԺԱՆՈՒՄԸ, և՛ ՊԱՅԹՈՒՄԸ ՄՐՏԻ  
ՆՈ՛ՒՅՆ ԲԱՌՈՎ ԵՍ ԿՈՉՈՒՄ,  
ՆՈՒՅՆ ՄԵ՛Կ ԲԱՌՈՎ...

ԵՎ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԱՍԵԼ ՔԵՁ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ:  
ՈՒ ԽՅԻԿՆ ԵՄ ՄՏՆՈՒՄ ՀԵՌԱԽՈՍԻ:  
ԲԱՅՑ ՀԻՇՈՒՄ ԵՄ ՀԱՆԿԱՐԾ, ՈՐ ԱՄԻՍՆԵՐ ԱՌԱՋ,  
ԵՐԲ ԵՄ ԽՈՍՈՒՄ ԷՐ ՀԵՌԱԽՈՍՈՎ ՔԵՁ ՀԵՏ՝  
ՍԱՌԱԾ ԼՍԱՓՈՂԸ ՇԻԿԱՆՈՒՄ ԷՐ ՁԵՌՔԻՍ  
ՔՈ ԿԱՐՈՏԻ ԽՈՍՔԻՑ ՈՒ ՇՇՈՒԿԻՑ ՍԻՐՈ:

ԻՆՉՊԵՍ ՈՍԿՈՐԻ ՄԵՁ ԾՈՒԾՆ Է ՄՆՈՒՄ՝  
ԼՍԱՓՈՂԻ ՄԵՁ ԷԼ ՄՆՈՒՄ ԷՐ ՔՈ ՉԱՅՆԻՑ  
ԻՆՉ-ՈՐ ԱԼԻՔ ՄԻ ՏԱՔ,  
ՈՒ ԵՍ -  
ԳԱԶԱՆԻ ՊԵՍ -  
ՊԱՏՐԱՍՏ ԷՐ ՋԱՐԴԵԼ,  
ՄԻԱՅՆ ԹԵ ԴՈՒՐՍ ՀԱՆԵՍ...

ՀԻՄԱ, ՀԱՎԱՆԱԲԱՐ, ԼՍԱՓՈՂՈՎ ԱՅԴ ՆՈՒՅՆ,  
ԻՆՉՊԵՍ ՄՈՒԹ ԱՆՑՈՒՂՈՎ,  
ՊԻՏԻ ՄԻ ՑՈՒՐՏ ՍՈՂԱ,  
ՄԻ ՄԻՋԱՆՑԻԿ ԿԵՂԾԻՔ...

ՈՒ ԵՍ  
ԱՆՄԻՋԱՊԵՍ  
ՁԵՌՔԸՍ ԵՏ ԵՄ ՔԱՇՈՒՄ ԼՍԱՓՈՂԻՑ՝  
Ա՛ՅՆ ԳԱԶԱՆԻ ՆՄԱՆ, ՈՐ ՄԽԱԼՄԱՄԲ  
ԹԱԹՆ Է ՀԱՆԿԱՐԾ ԴՆՈՒՄ ՈՋՆՈՒ ՎՐԱ:

ԱՍԵՂՆԵՐ ԵՆ ՀՈՍՈՒՄ ԱՍԵՆ ՋՐՀՈՐԴԱՆԻՑ:  
ԱՍԵՂՆԵՐԻ ՀՈՍՔ Է Կ ԻՄ ՆԵՐՍՈՒՄ...

ՄԵԾՔԹԱՆԻ ՄԻ ԱՄՊ ԱՌԱՋ ՄԵԿՆԱԾ ԴԻՉՈՎ  
ՀՈՏՈՏՈՒՄ Է ՀԵՌՎԻՑ ՄԻ ԵՐԿՆԱՔԵՐ ՇԻՆՎԱԾՔ,  
ՈՐ ԵՐԿԻ ՆՐԱՆ ՈՒՐՈՒՅՆ ԿԻՆ Է ԹՎՈՒՄ՝  
ՍԼԱՅԻ՛Կ ՈՒ ՃԵՐՄԱ՛Կ,  
ՀՆԱՐԱՎՈ՛Ր ՍԻՐՈՎ...

ԵՍ ԻՄ ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ՏՈԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՍՈՒՄ  
ԵՎ ՉԳՏՈՒՄ ԵՄ ԿԱԽՎԵԼ ԿԱՆԱՆՑ ԹԱՐԹԻՉՆԵՐԻՑ.  
-ԳՈՆԵ ՉԼԻՆԵՐ՝Ն ԱՅՍՔԱՆ ՆԵՐԿՎԱԾ-ՍԱՐՔՎԱԾ...

ԵՎ ԿՏՐԵԼՈՎ ԻՍԿՈՒՅՆ՝  
\_\_\_\_\_ՀՐԹԻՈՒ ՊԵՍ  
ՀԱՅԱՑՔՍ ԵՄ ՎԵՐ ՆԵՏՈՒՄ  
ՈՒ ՆԿԱՏՈՒՄ,  
ՈՐ ՄԵԿ ՈՒՐԻՇ ՍԿ ԱՄՊ, ԻՏԱԼԻԱՁԿ՝  
ԻՐ ԿՈՇԻԿՆ Է ԿԱԽԵԼ ՈՒՂԻՂ ԳԼԽՍ.  
-Ո՛ՒՐ ԷՐ ԹԵ ՀԱՐՎԱԾԵՐ՝  
ԽԵԼՔԻ ԳԱՅԻ...

Ա՛Խ, ԹԵ ԽԵԼՔԻ ԳԱՅԻ  
ՈՒ ՉՉԳԱՅԻ,

ՈՐ ՔՈ ՄԱՇԿՈՎ ԷԻՆ ԻՄ ՄԱՏՆԵՐԸ ՄԵՎՈՒՄ,  
ՄԻՆՉԴԵՌ ՀԻՄԱ, ԵՐԲ ԵՍ ՔԵԶ ԵՄ ԴԻՊՉՈՒՄ ՀԱՆԿԱՐԾ՝  
ԸՆԿՐԿՈՒՄ ԵՄ ԻՄԿՈՒՅՆ ԲՆԱԶԴԱԿԱՆ ՎԱԽՈՎ,  
ԱՍԵՍ ՀԱՆԿԱՐԾ ԴԻՊԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՐԻ.  
-ԻՄ ՄԱՏՆԵՐԸ ՔԵԶՆԻՑ ՕՏԱՐ ՀՈՏ ԵՆ ԱՌՆՈՒՄ...

ԵՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԷԻ ԵՍ ԱՅՆ ՏԵՂԵՐԸ ՔՈ,  
ՈՐ ՏԱՐԻՆԵՐ ՀԵՏՈ ԽՈՐՇՈՄՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՄ.  
-ԱՅԴ ԽՈՐՇՈՄՆԵՐՆ ԱՐԴԵՆ Ե՛Ս ՉՊԻՏԻ ՏԵՍՆԵՄ...

ՕՐ ՈՒ ԳԻՇԵՐՆԵՐԸ ՀԱՇՎՎԱԾ ԺԱՄԵՐՆ ԻՐԵՆՑ  
ԾԱԽՍՈՒՄ ԵՆ ՄԻՇՏ՝ ՏՆՏԵՍ ՄԻ ՏԱՆՏԻՐՈՋ ՆՄԱՆ:  
ՍԱԿԱՅՆ ԿՈՒՅՐԻ ՎԵ՞ՋՆ Է, ԹԵ ԹԱՆԿ ԱՐԺԵ ՄՈՍԸ:

ՄԵՆՔ՝ ԿՈՒՐԱՅԱԾ ՄԻՐՈՒՑ  
ՈՒ ԿՈՒՐԱՅԱԾ ԲԱԽՏԻՑ,  
ՑԵՐԵԿ ԷԻՆՔ ՎԱՌՈՒՄ ԳԻՇԵՐՎԱ ՄԵԶ  
ԵՎ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՇՎԻՆ ԶԳՈՒՄ ՑԵՐԵԿՆԵՐԸ...  
-Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՍԵԼ, ԹԵ ԱՅԴ Ե՛ՐԲ Է ՀԱՍՆՈՒՄ  
ԻՐ ԶՀԱՇՎՎԱԾ ՄԻՐՈ ՕՐԱՀԱՎԱՍԱՐԸ...

ՄԻՐՈՒՄ ԷԻ ԵՍ ՔԵԶ «ԻՄ ԽՆԴՈՒԹՅՈՒՆ» ԿՈՉԵԼ:  
ԵՎ ԴԱ ՄԻՐՈՒՆ ԲԱ՛Ռ ԶԷՐ,  
ԵՎ ԿԱՄ ՍՈ՛ՒՏ ԶԷՐ ՄԻՐՈՒՆ...

ՀԻՄԱ...  
ՆՈՒՅՆԻՄԿ ԼԵԶՈՒՆ, ԿԵՆԴԱՆՈՒ ՊԵՍ,  
ԻՐ ԲՆԱԶԴԸ ՈՒՆԻ:  
ՈՒ ԵՐԲ ԲՆԱԶԴԱԲԱՐ  
ՆՈՐԻՑ ԿՈՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ «ԻՄ ԽՆԴՈՒԹՅՈՒՆ»,  
ԲԵՐԱՆԻՄ ՄԵԶ ԼԵԶՈՒՄ ԴԱՂԴՂՎՈՒՄ Է ԱՅՆՊԵՍ,  
ԻՆՉՊԵՍ, ՀԱՎԱՆԱԲԱՐ, ԱՅՆ ՁԱԳՈՒԿԻ ԼԵԶՈՒՆ,  
ՈՐ ԵՂԻՆՋ Է ԿՐԾՈՒՄ՝ ԽՈՏ ԿԱՐԾԵԼՈՎ...

ՔԵԶ Ի՞ՆՉ ԿՈՉԵՍ ՀԻՄԱ.  
«ԻՄ ՏԱՌԱՊԱ՛ՆՔ»,  
«ԻՄ ՑԱ՛Վ»:  
Ի՞ՆՉ, Ի՞ՆՉ ԱՍԵՍ ՀԻՄԱ...

ԼԱՎ Է՝ ՈՉԻ՛ՆՉ ՉԱՍԵՍ  
ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԹՈՒՅԼ ՏԱՄ, ՈՐ ԻՄ ՄԻՏՔԸ ԳՈՐԾԻ  
ՇԱԽՍԱՏԱՅԻՆ ԾԱՆՈԹ ՁԻՈՒԿԻ ՊԵՍ՝  
ԹՈՉԿՈՏԵԼՈՎ ԹԵՔՎԻ ԱՍԵՆ ԿՈՂՄԻ ՎՐԱ,  
ՈՐՏԵՂ ԵՂԵԼ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒ ՉԵՆՔ ԼԻՆԻ...

ՇՈՐՈՐՈՒՄ Է ՆՈՐԻՑ ՀՆԱՏԱՐԱԶ ՄԻ ՕՐ:  
ԻՄԿ ԵՍ ՔՈ ՆՈՐ ՇՈՐԵՐՆ ԷԼ ՉՊԻՏԻ՛ ՏԵՍՆԵՄ...  
ՍԱԿԱՅՆ ԱԶՔԵՐՆ ՈՒՆԵՆ ՀԵՌՈՒՄՏԱՅՈՒՅՅՆ ԻՐԵՆՑ.

ՈՒ ԿՏԵՍՆԵՄ ԵՄ ՔԵԶ ՆԱԽ ՀԵՌՎԻՑ-ՀԵՌՈՒԻ:  
ՔԵԶ ԿՏԵՍՆԵՄ ՀԵՆՑ ԱՅՆ ԾԱՂԿԱՆԿԱՐ ՇՈՐՈՎ,  
ՈՐԻ ԶԱՆԳԱԿԱԶԽ ՔՂԱՆՑՔՆԵՐԻՑ  
ՎԱՐՊԵՏՈՐԴԻ ՔԱՄԻՆ ԿԱՐՈՒՍԵԼ ԷՐ ՍԱՐՔՈՒՄ,  
ՄԻ ԿԱՐՈՒՍԵԼ, ՈՐ ՄԻՇՏ ՓՉԱՆՈՒՄ ԷՐ ՇՈՒՏ-ՇՈՒՏ,  
ԲԱՅՑ և ՎԵՐԱՍԱՐՔՎՈՒՄ ԱՐԱԳՈՐԵՆ...

ԵՎ ՁԵՌՔԵՐՆ ԷԼ ՈՒՆԵՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՆՑ...

ՈՒ ՀԻՇՈՒՄ ԵՆ ԻՄՈՆՔ  
ԵՎ ԿՀԻՇԵՆ ԱՆՎԵՐԶ  
ԻՐԵՆՑ ՆՎԱՂՈՒՄԸ՝  
ՄԱԶԵՐԻԴ ՄԵԶ,  
ՈՒՇԱԹԱՓՈՒՄՆ ԻՐԵՆՑ՝  
ԿՐԾՔԻԴ ՎՐԱ,  
ԵՎ ԱՐԹՆԱՅՈՒՄՆ ԻՐԵՆՑ՝  
ՏԱՔ ԿՈՂԵՐԻԴ...

ԵՎ ՈՏՔԵՐՆ ԷԼ ՈՒՆԵՆ ԲՆԱԶԴՆ ԻՐԵՆՑ.  
ԻՆԶ ԱՅՆՏԵՂ ԵՆ ՏԱՆՈՒՄ, ՈՐ «ՄԵՐՆ» ԷԻՆՔ ԿՈՉՈՒՄ,  
ԻՆԶ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՅՆՏԵՂ՝  
ԿԱՄՔԸՍ ՉՀԱՐՑՆԵԼՈՎ:

ԱՀԱ ՓՈՂՈ՛ՅԸ ՄԵՐ.  
ԿՈՒԼ ԵՄ ՏԱԼԻՍ ԱՂՄՈՒԿ:  
ԱՀԱ ՆՐԲԱ՛ՆՑՔԸ ՄԵՐ.  
ՆԵՐԾԾՈՒՄ ԵՄ ԽԱՎԱՐ,  
ԵՎ ԻՄ ԿՆՃԻՌՆԵՐՈՒՄ ՑԱՎՆ Է ԿԱՊՏԻՆ ՏԱԼԻՍ...

ԱՀԱ ԾԱՌՈՒՂԻ՛Ն ՄԵՐ...

ԵՎ ՀՅՈՒՄԻՍՈՒՄ ԱՅՍ ՊԱՂ  
ԳԱՐՆԱՆ ՎԵՐԱՀԱՄԻՑ ԾԱՌԵՐՆ ԵՆ ԼԱՅ ԼԻՆՈՒՄ՝  
ԱՐԽԱՂԱՐԶԱՅԻՆ ՄԵ՛Ծ-ՄԵ՛Ծ ԿԱԹԻԼՆԵՐՈՎ...

ԱՀԱ ԿԱՆԳԱ՛ՌԸ ՄԵՐ...  
ՆԵՐՇՆՉՈՒՄ ԵՄ ՀԱՌԱՉ,  
ԱՐՏԱՇՆՉՈՒՄ ՄԵՌՅԱԼ ՄԻ ԼՌՈՒԹՅՈՒՆ,  
ԵՎ ԼԱԼԻՍ Է ՀՈԳԻՄ՝  
\_\_\_\_\_ՔԱՐԱՆՁԱՎԻ ՆՄԱՆ -  
ԻՆԶ-ՈՐ ԱՆՄԱՐԴԿԱՅԻ՛Ն ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՎ...

ԱՀԱ ՄԵՐ ԱՆՏԱ՛ՌԸ...

ԵՎ ԻՄ ԱԿԱՆՋՆԵՐՈՒՄ  
ԱՆՎԵՐԶ ԶՐԸՆԳՈՒՄ Է ԱՐՅՈՒՆԸՍ ՏԱՔ,  
ԱՅՆՊԵ՛Ս ԽԵՆԹԱՅԸՆՈՂ և ՄԻԱԼԱ՛Ր ԱՅՆՊԵՍ,  
ԻՆՉՊԵՍ ՄԺՂՈՒԿՆԵՐԻ ՊԱՐՄԻ ԲԶԶՈՅԸ ԽՈՒԼ՝  
ԱՄՌԱՆ ԱՆՏԱՌԻ ՄԵԶ,  
ՇՈԳ ԿԵՍՕՐԻՆ...

ԱՀԱ ԵՐԿԻ՛ՆՔԸ ՄԵՐ ԳԻՇԵՐԱՅԻ՛Ն...

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՆԸԻ ԳԼԽԻ ՆՄԱՆ ԴԵՂՆԱԾ  
ՄԻ ԼՈՒՄԻՆ Է ՀԻՄԱ ԻՆՁ ԽԵԹ ՈՒ ՄԵԹ ՆԱՅՈՒՄ՝  
ԳՈՒՅԵ ԱԿՆԱՐԿԵԼՈՎ ՀԱՅԱԴՈՒԼԸՍ ԱՆԿԱՍ...

ՍԵԱՍՏՌՈՒԹ ՄԻ ԱՄՊ, ԻՄ ԱԶՔԵՐԻ ԱՌԱՋ,  
ԱՍԵՍ ՎԵՐՔԻՍ ՎՐԱ ԱՂ ԱԾԵԼՈՎ,  
ԼՈՒՄՆԻ ՃԱՂՆ Է ԿՐԾՈՒՄ՝  
\_\_\_\_\_ԱՐԾԱԹ ՀՅՈՒԹՈՎ ՆՐԱՆ  
ԻՐ ՍԵ ԲԵՂ-ՄՈՐՈՒՔԸ ԹՈՒՆԴ ՕԾԵԼՈՎ...

ԱՀԱ ԵՐԿԻՂԸ ՄԵՐ...

ԵՎ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՆՄԱՆ՝  
ԻՄ ԿԼՈՐՎԱԾ ՄԻՐՏՆ ԷԼ ԻՐ ԲԵԵՌՆԵՐՆ ՈՒՆԻ,  
ՔՈ «ԱՅՈ»-Ն ՈՒ ՔՈ «ՉԷ»-Ն՝  
ԵՐԿՈՒՄՆ ԷԼ ՍԱ՛ՌՆ ՈՒ ՊԱ՛Ղ...

Է՛՛, ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՉԻ ՀԱՎԱՏՈՒՄ ՀԻՄԱ  
ՀՌՈՄԻ ՊԱ՛ՊԸ ՆՈՒՅՆԻՄԿ, ԷԼ ՈՒՐ ՄՆԱՅ ԹԵ ԵՍ:

ԲԱՅՑ ԻՍԿԱՊԵՍ ՍԵՐԸ ԻՐ ՀԱՆԴԵՐՁՅԱԼՆ ՈՒՆԻ՝  
ՈՒՐԻՇ - ԱՆԴՐՍԵՐՅԱՆ - ԵՐԿՐՈՐԴ ՄԻ ԿՅԱՆՔ,  
ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԿԱՐԾԵՍ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ,  
ԵՎ ՉԻ ԳՆՈՒՄ ՓՈՒԹԱՆՑ,  
ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԻՆԸ,  
ԱՅԼ ՏԵՆՈՒՄ Է ԱՅՆՔԱՆ,  
ՈՐՔԱՆ ԻՆՔԸ ԿՅԱՆՔԸ:

ԱՅՐ ԿՅԱՆՔՈՎ Է ԱՊՐՈՒՄ ԻՄ ՍԵՐՆ ԱՐԴԵՆ՝  
ՆՈՐԻՅ ՆՈՐՈԳԵԼՈՎ,  
ԱՊՐԵՅՆԵԼՈ՛Վ  
ԱՅՆ ԱՄԵՆԸ, ՈՐ ԿԱ՛Ր Կ ՉԻ՛ ԼԻՆԻ...

ՈՒ ԽԼԱՅԱԾ ԱՐԴԵՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՑԱՎԻՑ՝  
ՔԵՁ ԵՍ ԴԱՐՁՅԱԼ ԼՍՈՒՄ,  
ԼՍՈՒՄ ՔՈ ԽՈՍՔԵՐԸ,  
ՈՐ ԽԱՌՆԸՎՈՒՄ ԷԻՆ ՄԻՐՈՎ ՀՈՒՆՅԱԾ ԿՅԱՆՔԻՍ,  
ԻՆՉՊԵՍ ԱՂՄԸԿԱՐԱՐ ԱՅՍ ՔԱՂԱՔՆ Է ԽԱՌՆՈՒՄ  
ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԾԻԼ-ՎԻԼՆ ԻՐ ԾԽԱՅՈՂ ՇՆՉԻՆ՝  
ՔԱՂՅԸՐ ԹԹԽՄՈՐԻ՛,  
ԱՆՈՒՇ ՄԱԿԱՐԴԻ՛ ՊԵՍ...

ԻՆՁ ՓՈՂՈՑ ԵՄ ՆԵՏՈՒՄ,  
ԳՅՈՒՄ ԲՈՒՔԻ ԲԵՐԱՆ,  
ԻՍԿ ԴՈՒ ԲՈՒՔԻ ՄԻՋԻՑ ԻՄ ԱՌԱՋ ԵՍ ԵԼՆՈՒՄ  
ԹԵԹԵ - ԾԱՂԿՈՒՆ ՇՈՐՈՎ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ  
ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒՄ ՍԵՐԸԴ ՄԻ ԺՊԻՏՈՎ,  
ՈՐԻՑ ԱՄԵՆ ԿԱՍԿԱԾ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ԱՅՆՊԵՍ,  
ԻՆՉՊԵՍ ԽՈՒՅՍ Է ՏԱԼԻՍ ԴԵԸ ԽԱՉԻՑ...

ԱՅՆ, ԻՆՉ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ,  
ԱՆՀՆԱՐ Է ԴԱՌՆՈՒՄ ԵՐԿԱՐ ՊԱՀԵԼ.  
ՄԵԿ ԷԼ ՏԵՍԱՐ՝ ՀՈՏԵՑ-ԳԱՐՇԱՀՈՏԵՑ ՄԵՋՐԴ:  
ԵՎ ԱՅՍՏԵՂ Է ԱՀԱ, ՈՐ ՄԻ ՀԱՐԲԱԾ ԱՐՅՈՒՆՔ,  
ԵՐԿԱՐ ՈՒ ՏԱՆՁԱԼԻՅ՝ ՏԱՏԱՆՎԵԼՈՒՅ ՀԵՏՈ,  
ՏԱՊԱԼՎՈՒՄ Է ՆԵՐՔԵՆ՝  
ՀԱՍԿԱՑՆԵԼՈՎ,  
ԹԵ ԿԱՐՈՏԸ ՄԱՐԴ ՉԷ, ՈՐ ԲՈՒՆԵՍ ՈՒ ՄՈՐԹԵՍ,  
ԵՎ ԱՆՁՈՐ Է ԱՅՍՏԵՂ ԱՅՆ ԴԱՀԻՃԸ ՆՈՒՅՆԻՄԿ,  
ՈՐԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ...

ԱՉՔԵՐԻՍ ԵՄ ՍԱՍՏՈՒՄ՝ ՊԻՆԴ ՓԱԿԵԼՈՎ:  
ՍԱԿԱՅՆ ԿՈՊԵՐԻՍ ՏԱԿ ՔՈ ԱՉՔԵՐՆ ԵՆ ԲԱՅՎՈՒՄ.  
ԻՆՉ ՀԱՐԱՁԱ՛Տ ԱՅՆՔԱՆ ՍԵ ԱՉՔԵՐԸ,  
ՈՐ ԵՐԲ ԻՆՔՆԱՍՏՈՌԱՅ ՆԱՅՈՒՄ ԷՐՆ ԵՐԿԻՆՔ՝  
ՃԵՐՄԱԿ ԱՄՊԵՐՆ ԷՐՆ ՆՐԱՆՅ ԽՈՐՔՈՒՄ ԼՈՂՈՒՄ,  
ՀԵՌԱՆԱԼՈՒՅ ԱՌԱՋ ՄԻ ՊԱՀ ԿԱՇԿԱՆԴՎԵԼՈՎ  
ՔՈ ԿԵՌ ԹԱՐԹԻՉՆԵՐԻ ՎԱՆԴԱԿԻ ՄԵՋ ԹԱՎՈՒՏ:

Ա՛ն, ԱՅԴ ԱՉՔԵՐԸ ՔՈ  
ՈՒ ՔՈ ԹԱՐԹԻՉՆԵՐԸ...

ՄԵՐՆ ԻՆՉ ՀԱՄԱՐ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՅՆ ԿՆԻՔՆ Է ԵՂԵԼ,  
ՈՐ ՄԻՇՏ ԴՐՈՇՄՈՒՄ ԵՆ ՈՍԿՈՒ ՎՐԱ:  
ԵԹԵ ԿՅԱՆՔԸՍ ՁՈՒՐԿ Է ԱՅԴ ԿՆԻՔԻՅ ՄԻՐՈ՝  
ԵՎ ՍԵՓԱԿԱ՛Ն ԱՉՔԻՍ ԿԵՂԾ Է ԹՎՈՒՄ ՈՍԿԻՍ:

ՀԻՄԱ... ՈՐՏԵ՛Ղ ԾԱԽՍԵՄ  
ԵՎ Ո՛ՒՄ ԾԱԽՍԵՄ ՈՍԿԻՍ,  
ԻՆՉՊԵ՛Ս ՀԱՎԱՏԱՑՆԵՄ, ԹԵ ԿԵՂԾՎԱ՛Ծ ՉԷ, ԻՆՉՊԵ՛Ս,  
ԵԹԵ ԻՆՔՍ ԱՐԴԵՆ ՉԵՄ ՀԱՎԱՏՈՒՄ ԴՐԱՆ,  
ԵԹԵ ԻՆՔԸՍ ԳԻՏԵՄ, ՈՐ ՆԱ ՊԻՏԻ  
ԱՅՍ ՔԵՋԱՁՈՒՐԿ ՕԴԻՅ ՃԱՆԳԱՊԱՏԻ...

ՈՒ ԲՈՒՆՈՒՄ ԵՄ ՀԱՆԿԱՐԾ ԻՆՉ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԱՅՐՈՒՄ...

ՔՈ ԽԱԿԱԿՈՒԹ ՄԻՐՈՒՅ ԱՏԱՄՆԱՌՈՒ ՄՐՏՈՎ,  
ՍՏՈՒԳԱՊԵՍ ԽԱԲՎԱԾ ԵՄ ՄԱՀԱՌԻԹ ԽՈՅՎԱԾ՝  
ԵՍ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆԸՍ ԲԱՐՁՐ ԹՈՇԱԿ ՏԱԼԻՍ,  
ՈՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒ ՆՐԱ ՇՈՒՐԹՆ ԵՄ ՓԱԿՈՒՄ  
ԵՎ... ՆՈՐՈԳՈՒՄ ՄԵՐԸՍ ԱՅՆ ՆԵՐՈՒՄՈՎ,  
ՈՐ ՄՏՈՎԻՆ Է ԼՈՎ, ՈՒՐԵՄՆ՝ ԱՆՑՈՂԱԿԻ...

ԹԱՆԱՔԻ ՊԵՍ ԹԱՆՁԸՐ ՑԱՎՍ Է ՏԱՐՐԱԼՈՒԾՎՈՒՄ՝  
ՏԱԼՈՎ ԿԱՊՈ՛ՒՅՏ ՄԻ ՋԻՆՁ  
ԵՎ ՁՈ՛ՒՐ ՎՃԻՏ...

Ինձ ԽԱԲԵԼՈՎ ԻՆՔԸՍ՝  
Ինձ ՉԵՄ ՀԱՇՎՈՒՄ ԽԱԲՎԱԾ.  
ԻՆՔԸՍ ԻՆՁՆԻՑ ԳԱՂՏՆԻ՝  
ՔԵՁ ԵՄ ԴԱՐՁՅԱԼ ՄԻՐՈՒՄ...  
ԵՎ ԱՅՍՔԱՆԻՑ ՀԵՏՈ՝

ԱՅՍ ՑԱՎԵՐԻ  
ԵՎ ԱՅՍ ՏԱՆՁԱՆՔԻ ՄԵՁ ՔԵՁ ՄԻՐԵԼԸ  
ԱՅՆՔԱ՛Ն ԱՐՏԱՌՈՑ Է,  
ՏԱՐՕՐԻՆԱ՛Կ ԱՅՆՔԱՆ,  
ՈՐՔԱՆ ԱՐՏԱՌՈՑ Է, ՈՐ ԾՈՎԵՐԻ  
ԱՂԻ ՋՐԵՐԻ ՄԵՁ ՈՂՁ ԺԱՄԱՆԱԿ ԱՊՐՈՂ  
ՉԿՆԵՐՆ ԱՅՆՈՒՀԱՆԴԵՐՁ ԱՆԱԼԻ ԵՆ...

ՇԵՆՔԵՐՆ ԱՀԱ ՆՈՐԻՑ ՀԱՐԲՈՒԽՈՎ ԵՆ ՀԻՎԱՆԴ.  
-ՄԿԸՄՎՈՒՄ Է ԱՐԴԵՆ ՁՆՀԱԼԸ ԷԼԻ:

ՅՈՒՐՏ Է, ՍԱԿԱՅՆ ԱՐԴԵՆ ՊԱՇՏՈՆԱԿԱ՛Ն ՄԻ ՅՈՒՐՏ,  
ԵՎ ՈՒՐ ՈՐ Է ՊԻՏԻ ԳՈՐԾՆ ԱՎԱՐՏԻ - ԳՆԱ:

ԵՎ ՈՒՐ ՈՐ Է ԿԳԱ ԻՆՔԸ ԳԱՐՈՒՆՆ ԱՐԴԵՆ,  
ՈՒ ՊԱՏԱՆՈՒ ՆՄԱՆ ՀՈՂԸ ԿԱՊՐԻ ԱՐԲՈՒՆՔ.  
ԿԱՆԱՉ ԲԵՂԵՐ ԿԱՃԵՆ ՆՐԱ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻՆ,  
ԵՎ ԿՄԱԶԱԿԱԼԻ ԱՆՄԱԶ ԴԵՄՔԸ ՆՐԱ:

ԿՎԱՐԱՐԵՆ ՇՈՒՏՈՎ ՎՏԱԿ - ԳԵՏԱԿ - ԳԵՏԵՐ:  
ՉՎԱՐԱՐԵ՛Ն, ԲԱ Ո՛ՆՑ...

ԹԵ ԱՄԵՆ ԻՆՉ ԼՈՒ՝  
ՄԻՆՉԻ ԱՆԳԱՄ ՀԵՌՎԻՑ  
\_\_\_\_\_ ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՄ ԼՍԵԼ  
ԱՐՅԱՆ ԳՈՉԳՈՉՈՒՄԸ և ԻՄ ԵՐԱԿՆԵՐՈ՛ՒՄ.  
ԸՆԴԵՐԿՐՅԱ՛ ԳԵՏԵՐ՝  
ՎԱՐԱՐԵԼ ԵՆ, ԲԱ Ո՛ՆՑ...

ԿՎԱՐԱՐԵՆ ՇՈՒՏՈՎ ՎՏԱԿ - ԳԵՏԱԿ - ԳԵՏԵՐ,  
ԵՎ ՋՐԵՐԸ ԵԼՄԱՆ ԿՍՏԱՆԱՆ ԳՈՒՅՆ ՅՈՂԻ:  
Ո՛Չ, ՋՐԵՐԸ ԵԼՄԱՆ ՅՈ՛Ղ ԿԴԱՌՆԱՆ ԻՐԵՆՔ,  
ՈՐ ՎԵՐՔԵՐԸ ԲՈՒԺԵՆ ԽԵՂՃ ԱՓԵՐԻ,  
ԻՐԵ՛ՆՑ ԻՄԿ ՀԱՍՅԸՐԱԾ ՎԵՐՔԵՐԸ ԽՈՐ,  
ՈՐՈՆՔ, ՄԻԿՆՈ՛ՒՅՆՆ Է, ՉԵ՛Ն ԲՈՒԺՎԵԼՈՒ,  
ԻՆՉՊԵՍ ՎԵՐՔԵՐՆ ԻՄ ԱՅՆ,  
ՈՐ ԴՈՒ ՏՎԻՐ...

ԻՄԿ ԴՈՒ ԳԻՏԵ՛Ս ԱՐԴՅՈՔ,  
ԹԵ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԼԵԶՎԻ  
Ո՛Ր ԲԱՌՈՎ Է ԿՈՉՎՈՒՄ ԱՅՍ ՎԻՃԱԿԸ՝ ԻՍԸ,  
ՈՐԻՆ Ո՛Չ ՄԻ ՄԱԿԴԻՐ ՉԻ ՍՈՍԸՆՉՎՈՒՄ ԲՆԱՎ:

ԻՍԿ ԵՍ ԳԻՏԵ՛Մ ԱՐԴԵՆ.  
-ՃԳՆԱԺԱ՛Մ Է ԿՈՉՎՈՒՄ:

ՃԳՆԱԺԱՄՆ ԷԼ ԱՅՆ Է, ՈՐ ԱՆՑՆՈՒՄ Է ՎԱՂ - ՈՒՇ,  
ԹԵ ՉԷ ՊԻՏԻ ՈՐ ՆԱ ՈՒՐԻ՛Շ ԲԱՌՈՎ ԿՈՉՎԵՐ:  
ԵՎ ՍԱ ՃԻՇՏ Է ՆՈՒՅՆՔԱՆ,  
ԵՎ ԱՆԽՈՒՍԱՓ ՆՈՒՅՆՔԱՆ,  
ՈՐՔԱՆ ՈՐ ՄԱԶԵՐԻ ՃԵՐՄԱԿՈՒՄԸ:

ԻՍԿ ԻՄ ՄԱԶԵՐՆ ԻՐՈՔ ՄԿՍԵԼ ԵՆ ՓՈԽՎԵԼ:  
Ե՛ՎԸՍ ՄԻ ՔԻՉ ՃԵՐՄԱԿ՝  
ՈՒ ԿԱԶԱՏՎԵՄ ՔԵԶՆԻՑ.  
ԷԼ ՉԵ՛Մ ՔԱՅԼԻ ԱՅՆՊԵՍ,  
ԱՍԵՍ ՄԱՐԴ ՉԵՍ ԱՊՐՈՂ,  
ԱՅԼ ԿԱԽԱՐԱՆ ՔԱՅԼՈՂ, ՈՐԻՑ ԿԱԽ ԵՆ ՏՎԵԼ  
ՄԻ ՎԵՐԱՐԿՈՒ ՄԱՇՎԱԾ և ՄԻ ԾԱՆՈԹ ԳԼԽԱՐԿ...  
ԷԼ ՉԵ՛Մ ՇՆՉԻ ԱՐԴԵՆ ԽՌԽՌԱԼՈՎ ԱՅՆՊԵՍ,  
ԻՆՉՊԵՍ ԲՈՒԹ ՍՂՈՑԸ՝ ԹԱՅ ԳԵՐԱՆՈՒՄ...

ՄԱՔՍԱՆԵՆԳԻ ՆՄԱՆ ԻՆՉ ՎՏԱՆԳԻ ՄԱՏՆԱԾ,  
ՉՈՒՆԵՆԱԼՈՎ ՆՐԱ ՃԱՐՊԸԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԵԹ,  
ԷԼ ԵՄ՝ ԿՈԽԿՐՏԵԼՈՎ՝ ՉԵՍ ԱՆՑՆԻ և ԴԱՌՆԱ  
ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՄԿԱԾ ԱՅՆ ՄԱՀՄԱՆԻՑ,  
ՈՐԻ ՀԻՆ ԱՆՈՒՆԸ ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Է...

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՏԱՊԻՑ ԱՉՔԵՐՍ ԷԼ ՉԵ՛Ն ՔՐՏՆԻ,  
ԵՎ ՉԻ՛ ԿԱՂԱ ԺՊԻՏՆ ԻՄ ՇՈՒՐԹԵՐԻ ՎՐԱ՝  
ԴԵՍՔԸՍ ՎԵՐԱԾԵԼՈՎ ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ...

ԷԼ ՉԵ՛Մ ԳԵՐԱԴԱՍԻ ԵՍ ԽԱՎԱՐԸ ԼՈՒՅՍԻՑ,  
ԻՆՉՊԵՍ ԱՆՈՒՄ Է ԴԱ ՆԱԽԱՊԱՊԸ ՄԵՐ ԱՅՆ,  
ՈՐԻՆ ՊԱՏՎՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ «ԱՆՁՐԻԱՌՐԴ» ԲԱՌՈՎ...

ԵՎ ԻՆՉ ՉՄԻՐԵԼՈՒԴ, ԻՆՁՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒԴ  
ՀԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԳՅՈՒՏԻՆ ԵՍ ԿՆԱՅԵՍ ԱՅՆԺԱՄ,  
ԻՆՉՊԵՍ ՈՐ ՆԱՅՈՒՄ ԵՆՔ ԱՐԴ ՎԱՌՈՂԻ ԳՅՈՒՏԻՆ.  
-ԱՀԱՎՈՐ ԷՐ՝ ԵՐԵԿ,  
ՍՈՎՈՐԱԿԱՆ՝ ԱՅՍՕՐ...

...ՈՎ ՈՐ ՈՒՍԱՆԵԼ Է ՄԻՐՈ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ՝  
ԴԱՍ Է ԱՌՆՈՒՄ ՆԱԽ ՊԸՐՈՑԵՍՈՐ ՄԱՐԴԻՑ:  
ՈՒՍՏԻ ԵՍ ԷԼ ԳԻՏԵՍ, ՈՐ ԵՐԲ - ՄԱՐԴԻ ՆՄԱՆ -  
ՄԻ ՄԱՀԱԲԱՂՁ ՊԱՀԻ ԿԱԽ ԵՆ ՏԱԼԻՍ ԻՐԵՆՑ՝  
ԻՐԵՆՑ ԱՎՇԵ ՀՅՈՒԹԻՑ ԻՐԵՆՑ ՀՅՈՒՍԱԾ ԹՈԿՈՎ,  
ԱՊԱ... ՉԵ՛Ն ԽԵՂԴՎՈՒՄ, ՉԷ՛:  
-ԱՆՎՆԱ՛Մ ԵՆ ՄՆՈՒՄ...

ՀԵՌԱՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ ՁՄԵՌՆ ԱՀԱՎԱՍԻԿ



ԹԱՅ ԿՈԿՈՐԴՆ Է ՄԱՔՐՈՒՄ ՄԻ ԱՆՀԱՐՄԱՐ ՀԱԶՈՎ՝  
ԻՐԸ ԸԱՐԱՀԱՏՅԱԼ ԻՐ ՄԵԿՆՈՒՄԻ ՆՇԱՆ:

ՄԵԿՆԵԼՈՒ ԵՄ Ե՛Ս ԷԼ...

ՈՒ ԵՄ ՃԻՉՍ ԵՄ ԽԶՈՒՄ ԻՄ ԿԻՍԱԲԱՅ ԲԵՐՆՈՒՄ՝  
ԿԻՊ ՇԱՐԺՈՒՄՈՎ ՁԵՌՔԻՍ,  
ՀՊԱ՛ՐՏ ՁԵՌՔԻՍ:

ՄԵԿՆԵԼՈՒ ԵՄ Ե՛Ս ԷԼ...

ԹԵ ԼԻՆԵԻՆ ՄՏՔԵՐ ՁԱՅՆԱԳՐՈՂ ՆԻՇԵՐ՝  
ԿԴԱՌՆԱՅԻ ԳՈՒՅԵ ՆՈ՛Ր ԲԵԹՀՈՎԵՆ,  
Ե՛Վ ԽԼԱՅԱԾ ԱՐԴԵՆ՝  
ԲԻՐՏ ԱՂՄՈՒԿԻՑ ՑԱՎԻ,  
ԲԱՅՑ և ԼԵՅՈՒՆ ՄԻՐՈ ՆՎԱԳՆԵՐՈ՛Վ:

ՄԵԿՆԵԼՈՒ ԵՄ Ե՛Ս ԷԼ...

ՎԱՂԸ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԵՄ ՇՈՒՆՉ ԿԱՌՆԵՄ ԱԶԱՏ՝  
ԳՈՐԾՈՂ ՀՐԱԲՈՒԽԻ ԻՆՉ ՀԱՐԱԶԱՏ ՎԱՅՐՈՒՄ.  
-ՇՈԳԵՔԱՐՇԵՐՆ ԻՐԵՆՑ ԽԱՌՆԱՐԱՆԻՑ ՆԵՂԼԻԿ  
ԾՈՒԽ ԿՓՆՉԱՆ ԵՐԿԻՆՔ՝  
ՀՈՒՐ ԺԱՅԹՔԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏ:

ԻՍԿ ԻՄ ԾՈՒԽԸ ԵՐԲԵՔ ԴՈՒ ՉԵ՛Ս ՏԵՍՆԻ...  
ՈՒ ԿՄԵԿՆԵՄ ՀԵՌՈՒ,  
ՈՒ ԿՄԵԿՆԵՄ ԱՆԴԱՐԶ,  
ՈՒ ԿՆՍԵՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՐՏԵՐԻՆ ՄՈՏ,  
ՈՐ ՏԱՔԱՆԱՄ ՄԻ ՔԻՉ ՆՐԱՆՑ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ,  
ԵՎ ՏԱՔԱՆԱՆ ՄԻ ՔԻՉ ՆՐԱՆՔ ԻՄ ԲԱՐԿ ՄԻՐՈՒՑ...

ՆՈՐԱՀԱՍՏԱ՛Տ ՄԻ ՄԵՐ և ՆՈՐԱՔԱ՛ՆԴ ՄԻ ՄԵՐ,-  
ՍԱ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐ ՉԻ ՀՆԱՆԱԼՈՒ,  
ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵԻՑԵ ՉԵՆ ՀՆԱՆԱ  
ՄԱՀՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԸ ՆՈՐ,  
ԼԱՅԸ ԵՐԵԽԱՅԻ  
ՈՒ ԾԵՐԱՅԱԾ ԱՉՔԻ ԱՐՅՈՒՆՔՈՏՎԵԼՆ ԱՆԼԱՅ.  
ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵԻՑԵ ՉԵՆ ՀՆԱՆԱ  
ԲԱԽԻ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԱՐԱՐՉԻ ՀԵՏ,  
ԿԱՍԿԱԾՆ ՕԹԵԼԼՈՅԻ՝  
ԻՄ ՀՈՐԵՂԲՈՐ ՈՐԴՈՒ,  
ԵՎ ԻՄ ՍՈԿՐԱՏ ՊԱՊԻ ՎԱՐՔԸ ԾԱՆՈԹ...

ԴԵՐԸ ՉՄԻՐՎԱԾԻ ԿԱՄ ՄԵՐԺՎԱԾԻ  
ԵՄ՝ ԿԱՐՈՂ ԵՄ ԽԱՂԱԼ ՆՈ՛ԻՅՆ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ,  
ԻՆՉ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԿՅԱՆՔՈՒՄ ՊԻՏԻ ԴԱՌՆԱ  
ՀԱՄ ՉԶԳԱՅՈՂ ՄԱՐԴԸ՝ ԼԱՎ ԳԻՆԵԳՈՐԾ,  
ԳՈՒՅՆ ՉԶՈԿԵՂ ՄԱՐԴԸ՝ ԼԱՎ ԾԱՂԿԱԳԵՏ:

Մերժված ես շե՛ս եղել  
Ո՞ր շե՛ս Լիւնի - երբե՛ք:  
Ե՛վ Ինձ շտիրելի - ԱնՀնար է նորձնքս՛ն...  
Ես ԼՈԿ ՆԱՀԱՆՁՈՒՄ ԵՄ,  
ՈՐ ՍԿԸՍՎԵՄ ՆՈՐԻ՛Ց...

Երբ ՀԱՂԹՈՒՄ է ԽՈՍՔԸ՝ ՄԵՂԵԴԻՆ է ՄԵՌՆՈՒՄ:  
ԵՍ ԿԼՈՒԵՄ ՀԻՄԱ, ՈՐ ՄԵՂԵԴԻՆ ՀԻՉԻ.  
- ԿՆԱՀԱՆՁԵՄ,  
ՍԱԿԱՅՆ ԿՆԱՀԱՆՁԵՄ... ԵՐԳՈ՛Վ:

- Ե՛ս ես ՍՏԵՂԾԵԼ ՔԵԶ  
Ե՛վ ՍՏԵՂԾԵԼ՝ ՍԻՐՈ՛Վ:  
Ե՛վ ԴՈՒ ՊԻՏԻ ԱՊՐԵՍ ՍԻՐՈ՛Վ ՄԻԱՅՆ,-  
ԼՈԿ ԱՅՍ ԵՐԳՆ է ԹԱՌԱԾ ԻՄ ՆԱՀԱՆՁՈՂ ԲԵՐՆԻՆ...

- Մի ընդ-ՕՐԻ-ՆԱ-ԿԻ՛Ր,  
Օ-Ր-Ի-Ն-Ա՛Վ ՏՈՒՐ ՍԻՐՈ,-  
ԵՍ ԱՅՍՊԵՍ ԵՄ ԵՐԳՈՒՄ ՆԱՀԱՆՁԵԼԻՍ...

- ՕՐՀՆՅԱԼ ԵՂԻՐ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԿԱՅԻՐ՝  
ԹԵԿՈՒԶ ԻՆՁՆԻՑ ՀԵՌՈ՛Ւ,  
Ո՛Չ ԻՆՉ ՀԱՄԱՐ...

- ՀԱՎԵՏ ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՔՈ ԱՆՈՒՆԸ,  
ՈՐ ՀԻՉՈՒՄ Է ՄԵՐԹ «ԿԻՆ» ՈՒ ՄԵՐԹ ԷԼ «ՄԵՐ»...

- ՀԱՎԵՏ ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՔՈ ԺՊԻՏԸ՝  
ՀԱՅՏԱՐԱՐԸ ՍԻՐՈ և ԽՆԴՈՒԹՅԱՆ...

- ՀԱՎԵՏ ՕՀՆՅԱԼ ԼԻՆԵՆ ՔՈ ԿՈՂԵՐԸ,  
ՈՐՈՆՔ ԿՅԱՆՔ ԵՆ ԾՆՈՒՄ ՏԱՔ ՀՊՎԵԼՈՒՑ,  
ԻՆՉՊԵՍ ՈՐ ՇՓՎԵԼՈՒՑ ԾՆՎՈՒՄ Է ՀՈՒՐ...

- ՀԱՎԵՏ ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՆԱև ՀԵՌԱՅՈՒՄԸ,  
ՈՐ ԻԲՐև ՆՈՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԱՐՁԱԳԱՆՔԻ ՀԵՌՎՈՒՄ...

- ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՆԱև ՏՎԱԾ ՏԱՌԱՊԱՆՔԸ,  
ՈՐԻՑ ՈՉ ԹԵ ՄԵՌՆՈՒՄ, ԱՅԼ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ...

- ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՆԱև ԻՄ ՄԵԿՆՈՒՄԸ,  
ԻՄ ԱՅՍ ՆԱՀԱՆՁՈՒՄԸ,  
ՈՐ ՆԱՀԱՆՁ Է... ԵՐԳՈ՛Վ:

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ  
II.1961թ.  
ՄՈՍԿՎԱ